Ընտրիր ճիշտը

«Ընտրեցէք այսօր ձեզ համար, թէ ո՞րն էք պաշտելու. . . բայց ես եւ իմ տունը Եհովային ենք պաշտելու» (Յեսու ԻԴ.15):

Հրահանգներ Միացյալ ժամի և հաղորդության ժողովին երեխաների ելույթի համար

Սիրելի Երեխաների Խմբի նախագահություններ և երաժշտության ղեկավարներ,

Այս տարի դուք ճիշտն ընտրելու կարևորությունը երեխաներին սովորեցնելու հնարավորություն ունեք: Լավ ընտրություններ կատարել սովորելը մեզ համար մեր Երկնային Հոր ծրագրի կարևոր մասն է կազմում և շատ օրհնություններ կարող է բերել: Երբ դուք անեք սա, երեխաները կսովորեն, որ նրանք ընտրություններ կատարելիս կարող են օգնություն ստանալ, եթե հետևեն Հիսուս Քրիստոսի օրինակին, ապրեն ավետարանի սկզբունքներով և ուշադրությամբ լսեն Սուրբ Հոգու հուշումներին: Ճիշտն ընտրելը կօգնի երեխաներին մնալ Երկնային Հոր մոտ վերադառնալու ճանապարհին:

Մենք երախտապարտ ենք ձեր հավատարիմ ծառայության համար, երբ դուք սիրում և ուսուցանում եք ձեր Երեխաների Խմբի թանկագին երեխաներին: Մենք աղոթում ենք ձեր համար և գիտենք, որ Տերը կօրհնի ձեզ, մինչ դուք ծառայեք այս կարևոր կոչման մեջ:

Երեխաների Խմբի Գերագույն Նախագահություն

Կայքում առկա են. *Այս գրքույկում նշված նյութերը, տեղեկությունները և ցուցադրական նյութերը առկա են LDS.org կայքի Serving in the Church բաժնում:*

Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում:

Հրահանգներ Միացյալ Ժամի համար

Ավետարանի Ուսուցանում

Օգտագործեք այս գրքույկը, երբ պատրաստվում եք ամեն շաբաթ միացյալ ժամին 15-րոպե տևողությամբ դաս մատուցել: Դուք կարող եք ամենշաբաթյա դասերը համալրել Եկեղեցու կողմից հաստատված այլ նյութերով, ինչպիսիք են՝ *Ընկերը* կամ *Լիահոնան:* Հետևյալ ուղեցույցները կօգնեն ձեզ պլանավորել և մատուցել դասերը:

Միրեք նրանց, ում ուսուցանում եք: Երեխաների հանդեպ ձեր սերն արտահայտեք, սովորելով նրանց անունները և ծանոթանալով նրանց հետաքրքրություններին, տաղանդներին և կարիքներին:

Հոգով ուսուցանեք վարդապետությունը: Դասին պատրաստվելիս աղոթեք առաջնորդություն ստանալու համար և ձգտեք ամրապնդել ձեր վկայությունը այն սկզբունքների վերաբերյալ, որոնք ուսուցանելու եք: Դա կօգնի ձեզ Հոգով ուսուցանել:

Սովորելու կոչ արեք: Այս գրքույկը նախատեսված է օգնելու ձեզ իմանալ ոչ միայն *այն, ինչ* պետք է ուսուցանեք, այլև *ինչպես* պետք է ուսուցանել և ջանասիրաբար սովորելու կոչ անել: Դուք ավելի արդյունավետորեն կուսուցանեք վարդապետությունը, եթե ամեն դասին կատարեք հետևյալ երեք կետերը.

1. **Ներկայացրեք վարդապետությունը:** Պարզ ներկայացրեք վարդապետությունը, որը երեխաները պետք է սովորեն: Մտածեք, թե ինչպես կարող եք դա բանավոր և պատկերավոր ներկայացնել: (Որոշ օրինակների համար տես մայիս ամսվա երրորդ շաբաթվա և օգոստոս ամսվա երկրորդ շաբաթվա դասերը):
2. **Օգնեք հասկանալ:** Հետևեք, որ երեխաները խորապես հասկանան վարդապետությունը, օգտագործելով ուսուցանման տարբեր եղանակներ, ինչպիսիք են՝ երգելը, դերակատարումները և սուրբ գրություններ ընթերցելը:
3. **Խրախուսեք կիրառել:** Երեխաներին հնարավորություն տվեք իրենց կյանքում կիրառել վարդապետությունը: Մտածեք, թե ինչպես նրանք կարող են արտահայտել տվյալ վարդապետության հետ կապված իրենց զգացումները կամ նպատակներ դնել:

Այս գրքույկը տրամադրում է լիարժեք դասեր տարվա որոշ շաբաթների համար: Մյուս շաբաթների համար տրվում են մտքեր, բայց ոչ լիարժեք դասեր: Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Դուք կարող եք գաղափարներ քաղել այս գրքույկի այլ դասեր կարդալով: Եթե ամիսը հինգերորդ կիրակի ունի, այդ դասաժամը օգտագործեք նախորդ դասերը վերանայելու համար: Հոգին կարող է ուղեկցել ձեզ, եթե դուք դասերի համար ծրագրեք և պատրաստեք վարժություններ:

Ձեր դասերին պատրաստվելիս աշխատեք երաժշտության ղեկավարի հետ: Երգերը կօգնեն ամրապնդել ուսուցանվող վարդապետությունները: Երբեմն դուք կարող եք հրավիրել ուսուցիչներին և իրենց դասարանները, որոնք կօգնեն ձեզ ուսուցանել ավետարանի որոշ մասեր:

Որոշ դասեր առաջարկում են Երեխաների Խմբի դասին հրավիրել հյուր խոսնակների մասնակցելու: Նախքան այդ անձանց հրավիրելը , դուք պետք է ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի համաձայնությունը ստանաք:

Դասերի հետ տրված են մի քանի ուսուցողական խորհուրդներ, որոնք կօգնեն բարելավել ձեր ուսուցանման ունակությունը: Դասերը նաև ընդգրկում են նկարներ, որոնք կօգնեն ձեզ ընկալել, թե ինչպիսին է վարժությունը: Թեպետ ուսուցանելու ունակությունները կարևոր են, ձեր հոգևոր պատրաստվածությունը և վկայությունը կիրավիրեն Հոգին՝ հաստատելու այդ վարդապետությունները երեխաների սրտում:

Երգեցողության ժամ

Երեխաների Խմբում երաժշտությունը պետք է ստեղծի ակնածալի մթնոլորտ, ուսուցանի ավետարանը և օգնի երեխաներին զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը և երգից բխող ուրախությունը: Միացյալ ժամի 20 րոպեն պետք է նվիրվի երգելուն ու երաժշտությունն ուսուցանելուն: Այսպիսով, դուք բավականին ժամանակ կունենաք նոր երգ սովորեցնելու և օգնելու երեխաներին հաճույքով երգել:

Այս գրքույկում զետեղված է նոր երգ, որը երեխաները պետք է սովորեն այս տարի (տես էջ28): Այն նաև պարունակում է «Ինչպես օգտագործել երգը Երեխաների Խմբում» բաժինը (տես էջեր 26-27) և լրացուցիչ մտքեր երեխաներին երգեր սովորեցնելու վերաբերյալ (տես էջեր 9, 17):

Նախապատրաստություն. *Միացյալ ժամին պատրաստվելիս աղոթեք առաջնորդության համար և փնտրեք Հոգու ազդեցությունը: Եթե Հոգով պատրաստվեք և ուսուցանեք, Նա կհաստատի այն ամենի ճշմարտացիությունը, ինչ ուսուցանում եք: (Տես* ՈՒՀԱՄԿ, *13:)*

Ուղեցույցներ հաղորդության ժողովի ելույթի համար

Եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի ղեկավարության ներքո, հաղորդության ժողովին երեխաների ելույթն անց է կացվում տարվա չորրորդ եռամսյակին: Տարվա սկզբին, նախօրոք ծրագրերը քննարկելու նպատակով, հանդիպեք եպիսկոպոսության կամ ճյուղի նախագահության խորհրդականի հետ, որը պատասխանատու է Երեխաների Խմբի համար: Երբ ծրագրերը վերջնական կլինեն, ստացեք նրա հավանությունը:

Ծրագրեք այնպես, որ երեխաները ներկայացնեն ծրագիրը միացյալ ժամի ամսական թեմաների հիման վրա: Տարվա ընթացքում գրի առեք երեխաների առանձին ելույթները և փորձառությունները՝ հնարավորության դեպքում հաղորդության ելույթի ժամանակ օգտագործելու համար: Երբ ծրագրում եք, որ երեխաները կիսվեն այս տարվա թեմայի մասին իրենց սովորածով, մտածեք, թե ինչպես կարող են նրանք օգնել ներկաներին կենտրոնանալ ավետարանի այն վարդապետությունների վրա, որ իրենք են ուսուցանում: Նախագահության անդամներից մեկը կարող է ավարտել ժողովը ելույթի մասին կարճ ակնարկով:

Ելույթին նախապատրաստվելիս հիշեք հետևյալ ուղեցույցները.

- Փորձերը դասերից կամ ընտանիքներից անտեղի ժամանակ չպետք է խլեն:
- Հաղորդության ժողովին պատշաճ չէ օգտագործել ցուցադրական նյութեր, հատուկ հագուստներ և տեսանյութեր:

Նյութեր. *Դուք կարող եք գտնել ուսուցանման լրացուցիչ նյութեր, ինչպիսիք են՝ գունավորման էջերը, պատմությունները և վարժությունները* Ընկեր *և* Լիահոնա *ամսագրերում, մանկամսուրի դասագրքերում և* Ավետարանի արվեստի գրքում: *Օգտագործեք այդ աղբյուրները որպես հավելում ձեր դասերին: Նաև փնտրեք ամենամսյա թեմաներին վերաբերող նյութեր* Ընկեր-*ում՝* friend.lds.org *կայքում: Այս նյութերը կարող են նաև տպվել և օգտագործվել երեխաներին ուսուցանելիս:*

Այս գրքույկում օգտագործված աղբյուրներ

Այս գրքույկում օգտագործվել են հետևյալ նշաններն ու հապավումները.

ՀՄԵ *Հիմներ և մանկական երգեր*

ՈՒՀԱՄԿ *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում*

Շատ դասեր ներառում են նկարներ օգտագործելու վերաբերյալ առաջարկություններ:

Դուք կարող եք նկարներ գտնել *Ավետարանի արվեստի գրքում*, Ավետարանի նկարների ժողովածու, Երեխաների դասագրքի նկարների հավաքածու, Եկեղեցու ամսագրերում և images.lds.org կայքում:

Հունվար

Ընտրության իրավունքը ինքնուրույն ընտրելու պարգևն է

Երգ. «Որպես Աստծո Զավակ»
(այս ծրագրի 28-րդ էջում)

«Ուստի, մարդիկ ազատ են . . . ընտրելու ազատություն և հավերժական կյանք, բոլոր մարդկանց մեծ Միջնորդի միջոցով» (2 Նեփի 2.27):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***



Սուրբ գրությունների օգտագործում. *Կարևոր է, որ երեխաները ամենատարբեր ճշմարտությունները սովորեն սուրբ գրքերից: Երեխաներին սուրբ գրքերի պատմությունները սովորեցնելու որոշ գաղափարներ տրված են ՈՒՉԱՄԿ, 59-ում:*

Շաբաթ 1 և 2. Ընտրության իրավունքը ինքնուրույն ընտրելու պարգևն է:

Ներկայացրեք վարդապետությունը *(խաղալ գուշակող խաղ).* Ասացեք երեխաներին, որ դուք մտապահել եք մի բառ և նրանց հուշումներ տվեք, որոնք կօգնեն գուշակել բառը: Պատասխանն իմանալու դեպքում նրանց խնդրեք բարձրացնել իրենց ձեռքերը: Հուշումները կարող են ներառել հետևյալը. Մենք ունեինք սա մինչև աշխարհ գալը: Այն պարգև է Երկնային Հոր կողմից: Սա մեր համար Երկնային Հոր ծրագրի կարևոր մասն է: Սատանան ուզում էր խլել այն մեզնից: Մենք օգտագործում ենք այն, երբ ընտրություններ ենք կատարում: Այն պարգև է, որը մեզ թույլ է տալիս ինքնուրույն ընտրել: Այն սկսվում է *Ը* տառով: Երբ երեխաները գուշակեն բառը, միասին ասացեք. «Ընտրելու իրավունքը ինքնուրույն ընտրելու պարգևն է»:

Օգնեք հասկանալ *(առարկայական դասի դիտում և քննարկում).* Երեխաներին մի փայտ ցույց տվեք, որի մի ծայրին գրված է *ընտրություն* բառը և մյուս ծայրին գրված է *հետևանքներ* բառը: Բացատրեք, որ հետևանքն այն է, ինչը որ բնականաբար առաջանում է մեր ընտրության պատճառով, օրինակ, եթե մենք ընտրում ենք պարապել որևէ երաժշտական գործիքով, մենք կսկսենք ավելի նվագել դրանով, իսկ եթե մենք ընտրում ենք ձեռք տալ կրակին, մենք կայրվենք: Վերցրեք փայտը և ցույց տվեք երեխաներին, որ ամեն անգամ փայտը վերցնելիս դուք ունենում եք և ընտրությունը, և այդ ընտրության հետևանքը: Ավագ երեխաներից մեկին խնդրեք կարդալ 2 Նեփի 2.27: Մնացած երեխաներին խնդրեք լսել, թե որոնք են ճիշտ ընտրություն կատարելու հետևանքները(ազատություն և հավերժական կյանք), և որոնք են սխալ ընտրություն կատարելու հետևանքները (գերություն և թշվառություն): Գրատախտակին մի պարզ գծապատկեր գծեք այստեղ ցուցադրվածի նմանությամբ:



Օգնեք երեխաներին հասկանալ, որ լավ ընտրություններ կատարելը տանում է մեզ դեպի ազատություն և երջանկություն, իսկ սխալ ընտրությունները տանում են մեզ գերության և տխրության:

Երկու երեխաների հրավիրեք առաջ գալ, և թող յուրաքանչյուրը բռնի փայտի մի ծայրից: Խնդրեք երեխային, որը բռնել է «ընտրություն» կողմից, լավ ընտրության օրինակ բերել (օրինակ, ուրիշների հետ բարյացակամորեն խոսել): Մյուս երեխային խնդրեք կիսվել այդ ընտրության հնարավոր հետևանքներով (օրինակ, կայուն ընկերական հարաբերությունների ստեղծում): Կրկնեք մի քանի այլ երեխաների հետ:



Երեխաների սովորածը ամրապնդեք կրկնության միջոցով: Պահեք «ընտրություն և հետևանքներ» փայտիկը: Տարվա ընթացքում միացյալ ժամին ուրիշ հնարավորություններ կլինեն այն օգտագործելու համար:

Օգնեք հասկանալ *(սուրբ գրությունների պատմությունների ուսուցում).* Ամսվա առաջին երկու շաբաթների ընթացքում սուրբ գրություններից որոշ պատմություններ սովորեցրեք, որոնք ցույց են տալիս, թե ճիշտ ընտրություններ կատարելն ինչպես է տանում դեպի ազատություն և երջանկություն, և ինչպես է վատ ընտրություններ կատարելը տանում դեպի գերություն և թշվառություն: Սուրբ գրությունների պատմությունները, որոնք դուք կարող եք օգտագործել, ներառում են Փրկչին և Սատանային (տես Մովսես 4.1–4), Նեփիին, Լամանին և Լեմուելին (տես 1 Նեփի 2–4, 7, 18), Մեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին (տես Դանիել 3), կամ Ալմաին ու Նոյ Թագավորին (տես Մոսիա 17–19): Պատմություն ուսուցանելուց հետո երկու երեխայի հրավիրեք բռնել «ընտրություն և հետևանքներ» փայտիկի երկու կողմերից: Երեխաներից մեկին խնդրեք բացատրել ընտրությունները, որոնք կատարել են պատմության հերոսները, իսկ մյուս երեխան թող բացատրի այդ ընտրությունների հետևանքները:

Օգնեք կիրառել *(պատմություն լսել).* Հիսուս Քրիստոսի նկարը դրեք գրատախտակի վրա: Նկարեք աստիճաններ, որոնք տանում են դեպի նկարը: Կպչուն թղթի վրա մի պատկեր նկարեք և դրեք աստիճանների ներքևում: Մի կարճ պատմություն պատմեք ընտրությունների վերաբերյալ, որոնք երեխան կարող է անել մեկ օրվա ընթացքում: Յուրաքանչյուր ընտրության համար երեխաներին խնդրեք ցույց տալ՝ դա լավ ընտրություն էր, թե՝ վատ, լավ ընտրության դեպքում կանգնելով, իսկ վատ ընտրության դեպքում՝ նստելով: Օրինակ, «Ջեյնը խաղալիքը խլեց իր փոքր եղբոր ձեռքից, որը սկսեց լաց լինել: Երբ Ջեյնի մայրը հարցրեց, թե ինչու է նա լալիս, Ջեյնն ասաց, թե չգիտի»: Յուրաքանչյուր լավ ընտրության համար կպչուն պատկերը մի աստիճան մոտեցրեք Հիսուսին: Շարունակեք պատմությունը այլ ընտրություններով, մինչև որ պատկերը հասնի Փրկչին: Քննարկեք, թե ինչպես են լավ ընտրությունները երջանկացնում մեզ և օգնում մեզ մոտենալ Տիրոջը:



Շաբաթ 3. Նախաերկրային կյանքում ես ընտրել եմ հետևել Աստծո Ծրագրին:

Օգնեք հասկանալ *(երգեր երգել).* Հակիրճ քննարկեք հետևյալ գաղափարները, և այնուհետև երեխաների հետ երգեք համապատասխան երգերը. Նախքան աշխարհ գալը ես ապրել եմ երկնքում («Ես ապրել եմ երկնքում» [CS, 4]): Ես ընտրել եմ աշխարհ գալ և մարմին ստանալ («Զավակն եմ Աստծո» [CS, 2–3], «Տերն ինձ մի տաճար պարգևեց» [CS, 153]): Ես կմկրտվեմ և կստանամ Սուրբ Հոգու պարգևը («Երբ ես մկրտվեմ» [CS, 103], «Սուրբ Հոգին» [CS, 105]): Ես կարող եմ նախապատրաստվել տաճար գնալուն («Տեսնում եմ Տաճարը» [CS, 95], «Ընտանիքները կարող են հավերժ միանալ» [CS, 188]): Ես հարություն կառնեմ («Նա ուղարկեց Իր Որդուն» [CS, 34–35]):

Առարկայական դասերը *«կապում են անտեսանելի գաղափարները . . . որոշ տեսանելի առարկաների հետ, որոնց մասին աշակերտն արդեն իսկ գիտի, և այնուհետև կառուցում են այդ գիտելիքի հիման վրա» (Բոյդ Ք. Փաքեր,* ՈՒՉԱՄԿ, *163):*

Շաբաթ 4. Հիսուս Քրիստոսը ստեղծեց աշխարհը որպես մի վայր, որտեղ ես կարող եմ սովորել ճիշտն ընտրել:

Ներկայացրեք վարդապետությունը *(առարկայական դասի դիտում և քննարկում).* Երեխաներին ցույց տվեք տարբեր գույնի կավիճներով լի տուփ: Նրանց ցույց տվեք երկրորդ տուփը՝ միայն միագույն կավիճներով: Հարցրեք երեխաներին. «Եթե դուք նկար գունավորեք, այս կավիճների տուփերից ո՞րը կուզեք օգտագործել: Ինչո՞ւ»: Բացատրեք, որ ընտրությունների բազմազանությունը օրհնություն է: Վկայեք, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը սիրում են մեզ և Նրանք ուզում են, որ մենք ճիշտ ընտրություններ կատարենք:

Այս վարժության գաղափարը՝ ընտրությունը օրհնություն է, ներկայացնելու համար դուք կարող եք ընտրել գունավոր կավիճներ, գունավոր մատիտներ, զանազան մրգեր կամ երեխաներին ծանոթ ցանկացած այլ առարկա:

Օգնեք հասկանալ *(գունավորում).* Թող երեխաները գունավորեն, *Նայեք ձեր փոքրիկներին,* մանկամսուրային դասագրքի 35 էջի նկարը, կամ հրավիրեք նրանց նկարել նմանատիպ նկարներ՝ նույն մակագրությամբ: Քննարկեք, թե ով է ստեղծել բաները, որոնք կան նկարում, և ինչու են դրանք ստեղծվել: Սովորեցրեք երեխաներին, որ Երկնային Հայրը ակնկալում է, որ մենք հոգ տանենք այս աշխարհի համար, որը Իր Որդին ստեղծել է մեզ համար: Խնդրեք երեխաներին ասել, թե ինչպես իրենք կարող են հոգալ աշխարհի և դրա վրա արարված բաների համար: Հրավիրեք երեխաներին իրենց նկարները տուն տանել և խնդրել ծնողներին դրանցից գրքույկ պատրաստել:

Փետրվար

Երբ մենք ընտրում ենք ճիշտը, մենք օրհնվում ենք

Երգ. «Ընտրիր ճիշտը»
(*Hymns*, no. 239)

«Եթե դուք պահում եք նրա պատվիրանները, նա, իրոք, օրհնում և բարգավաճեցնում է ձեզ» (Մոսիա 2.22):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Շաբաթ 1. Նոյը օրհնվեց ճիշտն ընտրելու համար:

Ներկայացրեք վարդապետությունը *(համընկումների խաղ խաղալ).* Գրատախտակին նկարեք սովորական տապան: Պատրաստեք կենդանիների նկարների երկու միանման հավաքածու: Ամեն երեխայի տվեք մեկական նկար: Երեխաներին խնդրեք կանգնել և արձակել այն կենդանու ձայնը, որի նկարն իրենք ունեն, և լսել, թե ով է արձակում նույնանման ձայն: Երբ միանման նկար ունեցող երեխաները գտնեն իրար, թող նրանք միասին կանգնեն, մինչև բոլոր կենդանիները զույգեր կազմեն: Խնդրեք երեխաներին զույգերով մոտենալ և իրենց կենդանիներին դնել տապանի նկարի վրա: Հարցրեք երեխաներին. «Ո՞ր մարգարեին էր Տերը խնդրել, որ կենդանիներին հավաքեր տապանի մեջ»: Նշեք, որ հավանաբար դժվար խնդիր է եղել այդքան շատ կենդանիներ հավաքել տապանում, սակայն Նոյը ընտրել էր հնազանդվել Տիրոջ պատվիրանին:



Նկարներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում

Օգնեք հասկանալ *(սուրբ գրությունների ընթերցում).* Երեխաներին ցույց տվեք Նոյի նկարը, որտեղ նա քարոզում է, և կարդացեք Մովսես 8.20: Հարցրեք երեխաներին, թե ինչու են նրանք մտածում, որ մարդիկ չէին լսում Նոյին: Գրատախտակը կիսեք երկու մասի և մի կողմում գրեք հետևյալ հարցերը, իսկ մյուս կողմում սուրբ գրությունների հղումները՝ անկանոն ձևով. Ի՞նչ էր Տերը պատրաստվում անել մեղավորներին կործանելու համար (Ծննդոց Զ.17): Ի՞նչ նա պատվիրեց անել Նոյին՝ իր ընտանիքը փրկելու համար (Ծննդոց Զ.18): Ի՞նչ արեց Նոյը ճիշտն ընտրելու համար (Ծննդոց Է.5): Խնդրեք երեխաներին կարդալ սուրբ գրությունները և գտնել յուրաքանչյուր հարցի պատասխանը: Երեխաներին ցույց տվեք Նոյի նկարը, որտեղ նա տապան է կառուցում: Բացատրեք, որ երբեմն դժվար է ճիշտն ընտրել: Հարցրեք. «Ինչպե՞ս օրհնվեց Նոյը՝ ճիշտն ընտրելու համար»: Քաջալերեք երեխաներին կիսվել, թե ինչպես նրանք կօրհնվեն, եթե ճիշտն ընտրեն:

Ակնածանք. *Երեխաները կարող են սովորել զվարճալի միջոցառումների և վարժությունների միջոցով, միևնույն ժամանակ պահպանել ակնածալից վերաբերմունքը: «Ակնածանքը . . . հավասարազոր չէ կատարյալ լռությանը» (Boyd K. Packer, "Reverence Invites Revelation,"* Ensign, *Nov. 1991, 22):*

Շաբաթ 2. Հիսուսի հետևորդները օրհնվեցին՝ ճիշտն ընտրելով:

Օգնեք հասկանալ *(սուրբ գրությունների ընթերցում, գունավորում և տիկնիկների գործածում).* Երեխաների հետ միասին կարդացեք հետևյալ հատվածները, թե ինչպես են Հիսուսի հետևորդները ընտրել ճիշտը: Ղուկաս Ժ.38–42 (Մարիամ), Մատթեոս Դ.18–20 (Պետրոս և Անդրեաս), Գործք Առաքելոց Թ.1–9, 17–20 (Պողոս): Քննարկեք որոշ օրինություններ, որոնք այս մարդիկ ստացել են ճիշտն

Հասարակ տիկնիկներ կարող են օգտագործվել դասի մասերը բեմականացնելու համար: Դրանք արժեքավոր գործիքներ են հիմնական գաղափարն ամրապնդելու և երեխաների ուշադրությունը գրավելու համար (տես ՈՒՉԱՄԿ, 176–77):

ընտրելու համար: Յուրաքանչյուր երեխայի համար նկարեք հասարակ պատկերներ (կամ օգտագործեք «Զվարճալի բաներ», *Ընկեր,* Հունվար 2006, 35, և «Զվարճալի բաներ», *Ընկեր,* Փետրվար 2006, 31-ի սուրբ գրությունների պատկերները): Թող երեխաները գունավորեն նկարները, կտրեն, հանեն և դարձնեն կչչուն տիկնիկներ կամ թղթե կանգնող տիկնիկներ: Հրավիրեք երեխաներին օգտագործել իրենց տիկնիկները և վերապատմել պատմություններից մեկը: Օրինակ՝ «Իմ անունը Պողոս է: Ես հալածում էի մարդկանց, ովքեր հետևում էին Հիսուսին: Ես տեսիլքում տեսա Հիսուսին: Հիսուսը խնդրեց, որ ես դադարեցնեմ Իրեն հալածելը: Ես ընտրեցի հետևել Հիսուսին և իմ մնացած ողջ կյանքում միսիոներ եղա»:

Օգնեք կիրառել *(կրկնել սուրբ գրությունների պատմությունները).* Հրավիրեք երեխաներին օգտագործել իրենց տիկնիկները և վերապատմել սուրբ գրությունների պատմությունները իրենց ընտանիքներին տանը: Քաջալերեք նրանց կիսվել ընտանիքի անդամների հետ, թե ինչպես են պատմությունների հերոսները ընտրել ճիշտը և ինչպես են նրանք օրհնվել: Հարցրեք երեխաներին, թե ինչպես նրանք կարող են ճիշտն ընտրել հաջորդ շաբաթվա ընթացքում:

Կչչուն տիկնիկներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում:

Շաբաթ 3. Նեփին օրհնվեց ճիշտն ընտրելու համար:

Օգնեք հասկանալ *(մասնակցել բեմական-նացմանը).* Թող երեխաները ներկայացնեն այն պահերը, երբ Նեփին հնազանդվել է իր հորն ու Տիրոջը (օրինակ, տես 1 Նեփի 16.18–24, 30–32, 1 Նեփի 17.8, 17–18, 48–53, 1 Նեփի 18.9–21): Խորհեք, թե նրանք ինչպես կարող են օգտագործել հասարակ բեմական զգեստներ (բեմականացման մասին տեղեկություններ տես *ՈՒՀԱՄԿ,* 165–66). Միասին կարդացեք, թե ինչ ասաց Նեփին 1 Նեփի 17.3:

Օգնեք կիրառել *(երգ երգել).* Ցուցադրեք հունվարի «ընտրություն և հետևանքներ» փայտիկը, և հրավիրեք երեխաներին պատմել այն, ինչ հիշում են ընտրությունների և հետևանքների մասին: Ասացեք նրանց, որ մեր ստացած բազում օրհնությունները մեր կատարած լավ ընտրությունների հետևանքներն են: Հրավիրեք երեխաներին մտածել, թե ինչպես կարող են նրանք նմանվել Նեփիին և լավ ընտրություններ կատարել: Թող երեխաները երգեն «Նեփիի քաջությունը» (CS, 120–21) և երգելու ընթացքում իրար փոխանցեն «ընտրություն և հետևանքներ» փայտիկը: Անսպասելի անջատեք երաժշտությունը: Երբ երաժշտությունը դադարի, փայտը բռնած երեխային հրավիրեք կիսվել լավ ընտրությամբ, որը նա կարող է կատարել: Թող երեխան փայտիկը փոխանցի մեկ այլ երեխայի, և հրավիրեք նրան կիսվել օրհնությամբ, որը գալիս է այդ լավ ընտրությունը կատարելուց: Կրկնեք, եթե ժամանակը թույլ է տալիս:

Ցուցադրական նյութերը կարող են օգնել ուսուցման ընթացքում: Ցուցադրական նյութերը պետք է պարզ լինեն: Սա թույլ է տալիս երեխաներին կենտրոնանալ ողերձի, ոչ թե՝ ցուցադրական նյութերի վրա:

Արտասանել վարդապետությունը. *Այս ամիս երեխաները կսովորեն վարդապետության տարբեր սուրբ գրքային օրինակներ այն մասին, որ երբ մենք ընտրում ենք ճիշտը, մենք օրհնվում ենք: Հրավիրեք երեխաներին յուրաքանչյուր դասից առաջ ասել «Երբ մենք ընտրում ենք ճիշտը, մենք օրհնվում ենք»:*

Շաբաթ 4. Եկեղեցու անդամներն այսօր օրհնվում են ճիշտն ընտրելու համար:

Օգնեք հասկանալ *(կիսվել պատմություններով).* Հրավիրեք ձեր Երեխաների Խմբի երեխաների մի քանի ծնողների կամ տատիկների ու պապիկների կիսվել պատմություններով այն մասին, թե ինչպես են նրանք կամ իրենց նախնիները ճիշտն ընտրել: Սա կարող է ներառել Եկեղեցուն միանալու նրանց ընտրության պատմությունները: Նախքան ամեն պատմությունը, խնդրեք երեխաներին ուշադիր լսել, թե ինչպես են այս Եկեղեցու անդամները ճիշտն ընտրել և ինչպես են նրանք օրհնվել դրա արդյունքում: Ամեն պատմությունից հետո, խնդրեք երեխաներին ասել, թե ինչպես են անդամներն օրհնվել ճիշտն ընտրելու համար: Խնդրեք երեխաներին լսելու ընթացքում նկարներ նկարել պատմությունների վերաբերյալ, այնուհետև կիսվել դրանցով Երեխաների Խմբի մյուս երեխաների հետ և տանը:

Մարտ

Ապրող մարգարեները ինձ սովորեցնում են ընտրել ճիշտը

Երգ. «Պաշտպանել ճշմարտությունը» (CS, 159)

«Օ, հիշիր, որդիս, և սովորիր իմաստություն քո երիտասարդության տարիներին. Այո, քո երիտասարդության տարիներին սովորիր պահել Աստծո պատվիրանները» (Առմա 37.35):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Շաբաթ 1. Աստված խոսում է ապրող մարգարեների միջոցով:

Ներկայացրեք վարդապետությունը *(դիտել բեմականացում և անգիր սովորել սուրբ գրություն).* Հրավիրեք երեխաներից մեկին առաջ գալ: Ասեք մյուս երեխաներին հետևել նրա հրահանգներին: Երեխայի ականջին շշնջացեք պարզ հրահանգներ, ինչպիսիք են. «Ասա նրանց, որ երեք անգամ ծափ տան» կամ «Ասա նրանց, որ կանգնեն և տեղում քայլեն»: Թույլ տվեք, որ մի քանի երեխաներ հերթով առաջնորդ լինեն: Բացատրեք, որ չնայած նրանք բոլորը չէին լսում նրան հրահանգներ տալիս, նրանք հնարավորություն ունեին հնազանդվել հրահանգներին, որովհետև նրանք գիտեին, թե ում պետք է հետևեն: Հարցրեք, թե մենք ում պիտի հետևենք, որ իմանանք, թե Երկնային Հայրն ինչ է ուզում, որ մենք անենք: Ցույց տվեք Եկեղեցու ներկայիս Նախագահի նկարը: Թող երեխաները միասին ասեն. «Աստված խոսում է ապրող մարգարեների միջոցով»: Կարդացեք Ամովս Գ.7, և բացատրեք ցանկացած բառ, որը երեխաները չեն հասկանում: Օգնեք երեխաներին անգիր սովորել սուրբ գրությունը (տես *ՈՒՀԱՄԿ,* 171–72):

Շաբաթ 2. Առաջին Նախագահությունն ու Տասներկու Առաքյալները մարգարեներ են:

Ներկայացրեք վարդապետությունը. Գրատախտակին գրեք. «Առաջին Նախագահությունն ու Տասներկու Առաքյալները մարգարեներ են»: Ասեք երեխաներին, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մենք առաջնորդվում ենք Եկեղեցու Նախագահի, Առաջին Նախագահությունում նրա երկու խորհրդականների և Տասներկու Առաքյալների կողմից: Բացատրեք, որ Առաջին Նախագահությունն ու Տասներկու Առաքյալները մարգարեներ են:

Օգնեք կիրառել *(համընկումների խաղ խաղալ).* Հավաքեք Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի անդամների վեց նկար և գրեք նրանց անուններն առանձին թերթիկների վրա: Նկարներն ու թերթիկները հակառակ կողմով դրեք գրատախտակի վրա: Թող մի երեխա շրջի նկարներից մեկը, և հրավիրեք մեկ այլ երեխայի շրջել թերթիկներից մեկը, որի վրա անուն է գրված: Եթե նկարն ու անունը չեն համընկնում, դրանք դրեք իրենց տեղը և ուրիշ երկու երեխաների թույլ տվեք ընտրել: Եթե թղթերը համընկնում են, այդ երկու երեխաներին շշնջացեք ավետարանի մի սկզբունք, որն այդ առաջնորդը ուսուցանել է ամենավերջին գերագույն համաժողովի ժամանակ (նայեք վերջին համաժողովի նյութերը *Ensign*-ում կամ *Լիահոնայում*), և թող նրանք բեմադրեն, թե ինչպես կարող են ապրել այդ սկզբունքով: Հրավիրեք մյուս երեխաներին կռահել, թե ինչ են նրանք անում:

Հարցեր տվեք. *Հարցերը կարող են խթանել մասնակցությունն ու քննարկումը: Հարցեր տվեք, որոնք կօգնեն ձեզ որոշել, թե արդյոք երեխաները հասկանում են ուսուցանվող վարդապետությունը, և որոնք կարող են քաջալերել նրանց խորհել (տես* ՈՒՀԱՄԿ, *73): Օրինակ, դուք կարող եք տալ այսպիսի հարցեր. «Ինչպե՞ս է Երկնային Հայրը խոսում Եկեղեցու ամդամների հետ» և «Ինչպե՞ս եք դուք օրհնվել, երբ հետևել եք մարգարեին»:*

Շաբաթ 3. Աստծո մարգարեներն ու առաքյալները մեզ հետ խոսում են գերագույն համաժողովի ժամանակ:

Ձեր միջոցառումները հարմարեցրեք երեխաների տարիքին և ունակություններին: Երրորդ շաբաթվա միջոցառման համար, բացի գրված ուղերձները, կարող եք օգտագործել նկարներ:

Օգնեք հասկանալ և կիրառել *(խաղ խաղալ).* Առանձին թերթիկների վրա գրեք ամենավերջին համաժողովի Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի անդամների ուղերձների ամփոփիչ մտքից մեկական նախադասություն: Տեղադրեք դրանք գրատախտակի վրա առաջնորդների նկարների հետ միասին: Քննարկեք յուրաքանչյուր ուղերձը: Մի խումբ երեխաների խնդրեք դուրս գալ սենյակից: Գրատախտակից հեռացրեք ուղերձներից մեկը: Հրավիրեք երեխաներին վերադառնալ և միասին որոշել, թե որ ուղերձն է բացակայում: Խնդրեք երեխաներին ընտրել Երեխաների Խմբի մի երգ, որը համապատասխանում է ուղերձին, և միասին երգել: Հրավիրեք երեխաներին այդ ուղերձը կիրառելու ուղիներ առաջարկել: Կրկնեք, օգտագործելով մյուս ուղերձները:

Հուշում. *Մտածեք, թե ինչպես կարող եք երեխաներին և նրանց ծնողներին հայտնել նյութերի մասին, որոնք առկա են conferencegames.lds.org կայքում:*

Կրկնություն. *Երեխաները սովորում են կրկնության միջոցով: Շաբաթ 2-ում և 3-ում դուք երեխաներին սովորեցնելու եք նույն վարդապետությունը տարբեր ձևերով: Սա հնարավորություն կտա մեծացնել նրանց հասկացողությունը վարդապետության վերաբերյալ:*

Շաբաթ 4. Ես օրհնվում եմ, երբ ընտրում եմ հետևել մարգարեին:

Ներկայացրեք վարդապետությունը *(երգ երգել).* Երգեք «Հետևեք մարգարեին» երգի իններորդ հատվածը և կրկներգը (CS, 110–11): Խնդրեք երեխաներին լսել, թե ինչու ենք մենք հետևում մարգարեին: Թող երեխաները միասին ասեն. «Ես օրհնվում եմ, երբ ընտրում եմ հետևել մարգարեին»:

Օգնեք հասկանալ *(բեմադրել սուրբ գրությունների պատմությունները).* Երեխաներին պատմեք Եղիայի և Սարեփթացի որբևայրու պատմությունը (տես Գ Թագավորաց ԺԷ.8–16), և հրավիրեք երեխաներին ձեզ հետ միասին բեմադրել այն: Օրինակ, «Տերն ասաց Եղիա մարգարեին գնալ Սարեփթա կոչվող քաղաքը *(տեղում քայլեք):* Երբ նա հասավ քաղաք, նա տեսավ մի կնոջ, որը փայտեր էր հավաքում *(ձևացրեք, թե փայտ եք հավաքում):* Եղիան խնդրեց կնոջը ջուր տալ իրեն *(ձևացրեք, թե մեկին ջուր եք տալիս)* և մի կտոր հաց: Կինն ասաց Եղիային, որ ինքն ուներ միայն մի փոքր ալյուր և յուղ իր որդու համար հաց պատրաստելու համար *(գլխով ոչ ասեք):* Եղիան ասաց նրան, որ նախ մի քիչ հաց պատրաստեր իր համար, և Աստված նրան ավելի շատ ալյուր ու յուղ կտար: Կինը հնազանդվեց Եղիային *(ձևացրեք, թե հաց եք թխում):* Նա ուներ բավականաչափ ալյուր և յուղ շատ օրեր հաց թխելու համար *(ձևացրեք, թե ուտում եք)»:* Կրկնեք միջոցառումը Մովսեսի և պղնձի օձի (տես Թվոց ԻԱ.5–9) և Նեփիի և արույրե թիթեղների պատմությունների շուրջ (տես 1 Նեփի 3–4, 5.21–22): Խնդրեք երեխաներին պատմել, թե ինչպես էին օրհնվել պատմությունների մարդիկ, հետևելով մարգարեի խորհրդին:

Օգնեք կիրառել *(քննարկել մարգարեների ուսմունքները).* Երեխաներին հարցրեք. «Ո՞վ է մեր մարգարեն այսօր»: Ցույց տվեք Եկեղեցու ներկայիս Նախագահի նկարը: Բացատրեք, որ նա կանչվել է Աստծո կողմից: Թող երեխաները փոքր խմբերով քննարկեն, թե ինչպես կարող են հետևել նրան: Յուրաքանչյուր խմբից խնդրեք մի քանի երեխայի կիսվել իրենց գաղափարներով: Հրավիրեք երեխաներին ընտրել մի ուղի, որով կարող են հետևել մարգարեին շաբաթվա ընթացքում: Նրանց համար մի հիշեցում պատրաստեք, որը նրանք տուն կտանեն և կկիսվեն դրանով իրենց ընտանիքների հետ: Հիշեցրեք երեխաներին, որ նրանք կարող են լսել մարգարեի խոսքերը գերագույն համաժողովի ընթացքում, և խրախուսեք նրանց դիտել կամ լսել համաժողովը իրենց ընտանիքների հետ: Գերագույն համաժողովի հաջորդ շաբաթ որոշ երեխաների խնդրեք կիսվել փորձառությամբ, որը նրանք ունեցել են, լսելով մարգարեին և հետևելով նրա ուսմունքներին:

Երեխաներին խմբերի բաժանելը թույլ է տալիս ավելի շատ երեխաների մասնակցել: Դուք կարող եք խմբեր կազմել տարբեր ձևերով: Օրինակ, դուք կարող եք խնդրել երեխաներին միասին աշխատել որպես խմբեր, կամ դուք կարող եք ամեն երեխաներից և կրտսեր երեխաներից զույգեր կազմել: Չափահաս մեկը պետք է հսկի յուրաքանչյուր խմբին:

Ապրիլ

Հիսուս Քրիստոսը ինձ սովորեցնում է ընտրել ճիշտը

Երգ. Հիսուս Քրիստոսի մասին ձեր ընտրությամբ մի երգ *Մանկական Երգարանից*

«Որովհետև ես ձեզ օրինակ տուի, որ ինչպէս ես ձեզի արի, դուք էլ անէք» (Հովհաննես ԺԳ.15):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ պլանավորեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Վարժությունները հարմարեցրեք *ձեր Երեխաների Խմբի երեխաների տարիքին և թվին: Օրինակ, շաբաթ 1-ի վարժության մեջ, եթե դուք ունեք մեծ Երեխաների Խումբ, դուք միգուցե ցանկանաք պատրաստել մեկից ավելի գլուխկոտրուկների մասեր: Կրտսեր տարիքի երեխաների համար ուսուցիչը կարող է կարդալ սուրբ գրությունը և օգնել երեխաներին նկարներ նկարել:*

Շաբաթ 1. Հիսուս Քրիստոսը ինձ համար կատարյալ օրինակ է:

Օգնեք հասկանալ *(կարդալ սուրբ գրությունները և նկարներ նկարել).* Մի մեծ թղթի վրա գրեք «Հիսուս Քրիստոսը ինձ համար կատարյալ օրինակ է» արտահայտությունը: Թուղթը կտրեք չորս մասի: Հետևյալ նախադասություններից ամեն մեկը գրեք մասերից մեկի վրա.

- Նա մեզ ցույց տվեց, թե ինչպես պետք է մկրտվենք (տես Մատթեոս Գ.13–17):
- Նա սեր ցուցաբերեց ուրիշների հանդեպ (տես Մարկոս Ժ.13–16):
- Նա ներեց նրանց, ովքեր ցավ պատճառեցին Իրեն (տես Ղուկաս ԻԳ.34):
- Նա մեզ ցույց տվեց, թե ինչպես աղոթենք (տես Մատթեոս Զ.5–13):

Երգեք «Ես փորձում եմ լինել Հիսուսի նման» (*CS,* 78–79) երգը: Խնդրեք երեխաներին բացատրել, թե ինչ է սովորեցնում երգը: Ցույց տվեք Քրիստոսի նկարը, և ասեք երեխաներին, որ Նա շատ բաներ է մեզ սովորեցրել Իր կատարյալ օրինակի միջոցով: Երեխաներին բաժանեք չորս խմբի, և յուրաքանչյուր խմբի տվեք թղթի մասերից մեկը և մաքուր թղթեր: Խնդրեք նրանց միասին կարդալ սուրբ գրությունը և հետո նկարներ նկարել այն թեմայի շուրջ, թե ինչպես նրանք կարող են հետևել Քրիստոսի օրինակին: Հրավիրեք յուրաքանչյուր խմբին բացատրել իրենց սուրբ գրությունը, նկարները և իրենց մասը դնել գրատախտակի վրա: Երբ բոլոր մասերը միացվեն, միասին կրկնեք. «Հիսուս Քրիստոսը ինձ համար կատարյալ օրինակ է»:

Երբ ուսուցանում եք ավետարանի սկզբունքները, օգնեք երեխաներին ուղիներ գտնել դրանք իրենց կյանքում կիրառելու համար:

Շաբաթ 2 և 3. Հիսուս Քրիստոսը սովորեցրել է ինձ ճիշտ ապրելու ուղին:

Ներկայացրեք վարդապետությունը *(երգ երգել).* Երգեք «Ընտրեք ճիշտ ուղին» (*CS,* 160–61) երգը, և երեխաների կեսին խնդրեք լսել, թե մենք ինչպես կարող ենք երջանիկ լինել, իսկ մյուս կեսին՝ լսել, թե ինչը մեզ կօգնի և ցույց կտա ուղին: Քննարկեք, թե ինչ սովորեցին երեխաները երգից:

Օգնեք հասկանալ *(խաղալ գուշակող խաղ և կարդալ սուրբ գրությունները).* Պատրաստեք բառաշերտեր հետևյալ բառերով և սուրբ գրությունների հղումներով. *սոված* (Մատթեոս Ե.6), *լուսավորի* (Մատթեոս Ե.16), *սիրեցեք* (Մատթեոս Ե.44), և *աղոթք անել* (Մատթեոս Զ.6): Ցուցադրեք Լեռան Քարոզը նկարը: Բացատրեք, որ Հիսուսը բարձրացավ լեռան վրա Իր աշակերտներին ուսուցանելու համար: Այն, ինչ Նա սովորեցրեց, այժմ կոչվում է Լեռան Քարոզ: Բառաշերտերից մեկը ցույց տվեք

Բառաշերտեր կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում

երեխաների կեսին, և խնդրեք նրանց բեմադրել բառը, որ մնացած երեխաները գուշակեն: Միասին կարդացեք համապատասխան սուրբ գրությունը, և երեխաներին օգնեք հասկանալ, թե ինչ է ուսուցանել Քրիստոսը և ինչպես մենք կարող ենք հետևել Նրա օրինակին: Նույնը կրկնեք մյուս բառերով և սուրբ գրություններով:

Օգնեք կիրառել *(քննարկել իրավիճակի ուսումնասիրությունը).* Թղթի չորս կտորների վրա գրեք Հիսուսի հետևյալ ուսմունքները. (1) Լինել արդարության սոված և ծարավ, (2) Թող այսպես լուսավորի ձեր լույսը, (3) Սիրեք ձեր թշնամիներին, (4) Աղոթեք Երկնային Հորը: (Մտածեք նկարներ օգտագործելու մասին, որոնք լուսաբանում են այս ուսմունքները կրտսեր երեխաների համար:) Թերթիկները դրեք սենյակի տարբեր մասերում: Նախապատրաստվեք իրավիճակների ուսումնասիրությանը (տես *ՈՒՉԱՄԿ,* 161–62), որը կօգնի երեխաներին հասկանալ, թե ինչպես կիրառել այս ուսմունքները: Օրինակ՝ «Ինչ-որ մեկը դպրոցում ծաղրում է ձեզ և անպատիվ խոսքեր ասում: Ի՞նչ կանեք դուք»: Կրկնեք վերը նկարագրված գուշակող խաղի սուրբ գրությունները և նշեք, որ սենյակի տարբեր մասերում դրված թերթիկները համապատասխանում են սուրբ գրություններին: Երեխաների համար կարդացեք իրավիճակների ուսումնասիրությունները և հրավիրեք նրանց կանգնել և շրջվել դեպի այն թերթիկը, որի ուսմունքը կօգնի նրանց ընտրել ճիշտը: Մի քանի երեխաների խնդրեք ասել, թե ինչ ընտրություն իրենք կկատարեին:

Թող երեխաները բարձրաձայն կարդան սուրբ գրություններից: Տեղակ եղեք յուրաքանչյուր երեխայի ունակությունների մասին, և օգնեք յուրաքանչյուրին, որ արդյունավետորեն մասնակցեն:

Շաբաթ 4. Ես զգում եմ իմ Փրկչի սերը, երբ փորձում եմ լինել Հիսուս Քրիստոսի նման:

Օգնեք հասկանալ *(երգ երգել և ընտրություններ կատարել).* Երգեք «Ես զգում եմ իմ Փրկչի սերը» երգը (*CS,* 74–75): Գրեք մի քանի իրավիճակների ուսումնասիրություններ, որոնք լուսաբանում են, թե ինչպես կարող է երեխան հետևել Քրիստոսի ուսմունքներից մեկին: Նաև ներառեք սուրբ գրության հղում, որտեղ կարելի է գտնել այդ ուսմունքը: Ներքևում կան մի քանի օրինակներ:

Մառան խնդրել էր իր կրտսեր քրոջը չօգտագործել իր գունավոր կավիճները, սակայն նրա քույրիկը, այնուամենայնիվ, օգտագործեց դրանք: Հիսուսին նմանվելու համար Մառան կարող էր.

ա. Բարկանալ իր քույրիկի վրա:
բ. Թաքցնել իր գունավոր կավիճները:
գ. Ներել իր քույրիկին:

Մատթեոս ԺԸ.21–22:

Ջոնը ֆուտբոլ է խաղում իր ընկերների հետ և նկատում է մեկ այլ տղայի, որը մենակ կանգնած դիտում է խաղը: Քրիստոսին նմանվելու համար Ջոնը կարող էր.

ա. Ծաղրել տղային մենակ լինելու համար:
բ. Ոշադրություն չդարձնել տղայի վրա և շարունակել խաղալ իր ընկերների հետ:
գ. Հրավիրել տղային իրենց հետ ֆուտբոլ խաղալու:

Հովհաննես ԺԳ.34:

Խնդրեք մի երեխայի կարդալ իրավիճակների ուսումնասիրություններից մեկը: Այնուհետև խնդրեք նրան մեկ առ մեկ կարդալ պատասխանները: Հրավիրեք մնացած երեխաներին կանգնել, երբ նրանք լսեն պատասխանը, որը կհամապատասխանի Հիսուսի օրինակին հետևելուն: Հրավիրեք մի քանի երեխաների բարձրաձայն կարդալ սուրբ գրությունը, և քննարկեք, թե ինչ է ուսուցանել Հիսուսը: Քննարկեք, թե այս իրավիճակում Հիսուսի օրինակին հետևելը ինչպես կարող է մեզ օգնել զգալ Փրկչի սերը: Նույնը կրկնեք յուրաքանչյուր իրավիճակի նկարագրության հետ:

Օգնեք կիրառել. Խնդրեք երեխաներին այս շաբաթ անել այն, ինչ Հիսուսը կցանկանար, որ նրանք անեին: Ասեք նրանց, որ մյուս շաբաթ դուք կխնդրեք նրանցից ոմանց պատմել, թե ինչ իրենք արեցին և ինչպես զգացին Փրկչի սերը:

Օգնություն երաժշտության ղեկավարին

Որպեսզի օգնեք երեխաներին սովորել նոր երգ, խորհեք հետևյալի շուրջ.

- Խնդրեք երեխաներին ազդանշան տալ, երբ նրանք երգում են որոշակի բառ, կամ հաշվել իրենց մատների վրա, թե քանի անգամ են երգում այդ բառը: Օրինակ, երգեք «Նա ուղարկեց Իր Որդուն» երգը (*CS,* 34–35), և խնդրեք նրանց հաշվել իրենց մատների վրա, թե քանի անգամ են նրանք երգում «Իր Որդուն» բառերը:
- Ընտրեք նկար և բառ, որոնք ներկայացնում են երգի յուրաքանչյուր արտահայտությունը, և դրանք դրեք թղթի վրա: Օրինակ, երբ դուք երգեք «Նա ուղարկեց Իր Որդուն» երգը (*CS,* 34–35), ցուցադրեք «Ինչպես կարող էր Հայրը հայտնել աշխարհին սեր և քնքշություն» արտահայտությունը նկարի հետ միասին, որի վրա նկարված է սիրտ և գրված է *քնքշություն* բառը: «Նա ուղարկեց իր Որդուն՝ նորածին մանկիկին, խաղաղությամբ և սրբությամբ» արտահայտության ժամանակ ցուցադրեք Սուրբ ծննդյան նկար և *խաղաղություն* բառը: Դուք կարող եք ներգրավել երեխաներին, մինչ նրանք կբռնեն նկարները երգելու ընթացքում:

Մայիս

Երգ. «Երբ ես մկրտվեմ» (*CS*, 103)

Ես ընտրել եմ ճիշտը, երբ մկրտվել եմ և հաստատվել որպես Եկեղեցու անդամ

«Ապաշխարեցէք՝ եւ ձեզանից ամեն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղքերի թողութեան համար, եւ Սուրբ Հոգու պարգեւը կընդունիք» (Գործք Առաքելոց Բ.38):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ պլանավորեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Հուշում. *Շաբաթ 1-ի վարժության համար դուք կարող եք նաև հրավիրել մի երեխայի և ուսին դնել քարերով լի պարկ, այնուհետև ցույց տալ, թե ինչպես է ապաշխարությունը նմանվում պարկից քարերը հանելուն:*

Շաբաթ 1. Եթե ես ապաշխարեմ, ես կարող եմ ներվել:

Օգնեք հասկանալ *(մասնակցելով առարկայական դասին).* Յուրաքանչյուր երեխայի տվեք գլաքար: Խնդրեք երեխաներին գլաքարը դնել իրենց կոշիկի մեջ, կանգնել և քայլել: Հարցրեք երեխաներին, թե ինչպես են իրենց զգում, երբ քայլում են գլաքարը կոշիկի մեջ: Հարցրեք, թե ինչպես է մեղքը նմանվում գլաքարին: (Դրանից մենք մեզ լավ չենք զգում. այն մեզ տխրություն է պատճառում):

Խնդրեք նրանց հանել գլաքարը, ապա հարցրեք, թե ինչպես է ապաշխարելն ու Երկնային Հորից ներում ստանալը նմանվում գլաքարը մեր կոշիկից հանելուն: Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի շնորհիվ մենք կարող ենք ապաշխարել և ներում ստանալ մեր մեղքերից: Վկայություն բերեք, որ ապաշխարությունը հրաշալի օրհնություն է՝ Երկնային Հոր կողմից և որ այն բերում է մեզ երջանկություն:

Շաբաթ 2. Երբ ես մկրտվում եմ և հաստատվում, ես հետևում եմ Հիսուսի օրինակին:

Օգնեք հասկանալ *(խաղալ հիշողության խաղ և սուրբ գրություններ կարդալ).* Ցուցադրեք Հիսուսին մկրտող Հովհաննես Մկրտչի նկարը, և մկրտվող որևէ երեխայի նկար: Թույլ տվեք, որ երեխաները 20 վայրկյան նայեն նկարներին: Այնուհետև ծածկեք նկարները և խնդրեք երեխաներին մտաբերել երկու նկարներում միանման առարկաները, որքան որ կհիշեն: Նրանց պատասխանները կարող եք գրել գրատախտակին:

Երեխաներին խնդրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 20.72–74, և հասկանալ, թե ով կարող է որևէ մեկին մկրտել և ինչպես պետք է կատարվի մկրտությունը: Հրավիրեք երեխաներին ասել, թե ինչ նոր բան նրանք իմացան: Նշեք, որ մկրտող անձնավորությունը պետք է ունենա քահանայության իշխանություն և ամբողջությամբ ընկղմվի ջրի մեջ: Կրկին ցուցադրեք երկու նկարները: Նշեք, որ և Հիսուսը, և երեխան մկրտվում են ընկղմամբ նրա կողմից, ով ունի քահանայության իշխանություն:

Օգնեք կիրառել *(գունավորել և երգ երգել).* Յուրաքանչյուր երեխայի համար պատճենահանեք մանկամսուրի դասագրքի 111 էջը, *Նայեք ձեր փոքրիկներին,* որպեսզի գունավորեն: Երգեք «Մկրտություն» երգը (*CS*, 100–101), և խրախուսեք երեխաներին մկրտվել ինչպես Հիսուսը:



Մանկամսուրային դասագիրքը հնարավոր է գտնել sharingtime.lds.org կայքում:

Շաբաթ 3. Սուրբ Հոգին կարող է ինձ օգնել:

Ներկայացրեք վարդապետությունը *(առարկայական դասի դիտում).* Թող մի երեխա կանգնի դռան մոտ: Կապով փակեք երեխայի աչքերը, և թող նա առանց օգնության փորձի գտնել իր աթոռը և նստել: Կրկնեք վարժությունը, բայց այս անգամ խնդրեք մեկ այլ երեխայի առաջնորդել աչքերը կապած երեխային՝ դիպչելով նրա ձեռքին և առաջնորդելով նրան: Քննարկեք երեխաների հետ, թե ինչու էր ավելի հեշտ գտնել աթոռը երկրորդ անգամ: Բացատրեք, որ Սուրբ Հոգին կարող է մեզ օգնել՝ ուղղություն տալով կյանքում: Հրավիրեք երեխաներին ասել. «Սուրբ Հոգին կարող է ինձ օգնել»:

Ներկայացումների մեջ երեխաներին ներգրավելը օգնում է գրավել նրանց ուշադրությունը և ավելի լավ սովորել:

Օգնեք հասկանալ *(երգ երգել և համընկումների խաղ խաղալ).* Գրատախտակին գրեք *օգնել* բառը: Երգեք «Սուրբ Հոգին» երգը (*CS,* 105), և հրավիրեք երեխաներին հաշվել երգում նշված բաները, որոնք Սուրբ Հոգին անում է մեզ օգնելու համար:

Նախքան Երեխաների Խմբի դասի սկսվելը պատրաստեք 10 թերթիկներ, որոնց վրա նկարված է ԸՃ վահանը: Յուրաքանչյուր թերթիկի մյուս կողմում գրեք հետևյալ 5 արտահայտություններից մեկը, որոնք նկարագրում են, թե ինչպես է Սուրբ Հոգին մեզ օգնում. *Սուրբ Հոգին մխիթարում է մեզ, Սուրբ Հոգին վկայում է Հիսուս Քրիստոսի մասին, Սուրբ Հոգին ուսուցանում է մեզ, Սուրբ Հոգին ասում է մեզ ինչ անել կամ չանել* և *Սուրբ Հոգին օգնում է մեզ բարին անել* (յուրաքանչյուր արտահայտությունը կլինի երկու տարբեր թերթիկների վրա): Թերթիկները խառը դրեք գրատախտակի վրա՝ ԸՃ վահաններն ուղղված դեպի երեխաները: Խնդրեք երեխաներից մեկին շրջել թերթիկներից մեկը: Միասին կարդացեք հետևում գրված բառերը: Խնդրեք մեկ այլ երեխայի շրջել մեկ այլ թերթիկ և տեսեք, թե արդյոք այն համընկնում է մյուսի հետ: Միասին կարդացեք հակառակ կողմում գրված բառերը: Եթե թերթիկները համընկնում են, դրանք վերցրեք գրատախտակից: Եթե դրանք չեն համընկնում, դրանք հետ շրջեք: Կրկնեք, մինչև գտնեք բոլոր համընկումները:



ԸՃ լոգոտիպը կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում:

Օգնեք կիրառել *(քննարկել սուրբ գրությունները).* Երեխաներին խմբերի բաժանեք: Յուրաքանչյուր խմբի տվեք հետևյալ սուրբ գրությունների հղումներից մեկը. Հովհաննես ԺԴ.26, Հովհաննես ԺԵ.26, 2 Նեփի 32.5, ՎԱՈՒ 11.12: Խնդրեք յուրաքանչյուր խմբի կարդալ իրենց սուրբ գրությունը և քննարկել, թե ինչ է այն նշանակում: Հրավիրեք երեխաներին և նրանց ուսուցիչներին կիսվել օրինակներով, թե ինչպես են նրանք զգացել Սուրբ Հոգու ազդեցությունը:

Նախապատրաստություն. *Փնտրեք Հոգու առաջնորդությունը, երբ դասեր եք պատրաստում, և հարմարեցրեք գաղափարները ձեր երեխաների տարիքին, ունակություններին և պարտականություններին: Օրինակ, որոշ դասերի գաղափարները ընդամենը մի քանի րոպե կպահանջեն ուսուցանելու համար: Դուք կարող եք լրացնել դասերը ձեր սեփական գաղափարներով:*

Ներգրավեք բոլոր երեխաներին. *դուք կարող եք ներգրավել կրտսեր երեխաներին՝ կցելով նրանց ավագ երեխաներին: Օրինակ, շաբաթ 4-ի վարժության մեջ կրտսեր երեխաները կարող են բռնել բառաշերտերը, մինչ ավագ երեխաները կօգնեն նրանց կանգնել ճիշտ հերթականությամբ:*

Շաբաթ 4. Երբ ես հաղորդություն եմ ընդունում, ես վերանորոգում եմ իմ մկրտության ուխտերը:

Օգնեք հասկանալ *(քննարկել ուխտերը և կարդալ սուրբ գրությունները).* Բացատրեք, որ ուխտը երկկողմանի սուրբ խոստում է մեր և Երկնային Հոր միջև. մենք խոստանում ենք որոշակի բաներ անել, և երբ մենք անում ենք, Նա խոստանում է օրհնել մեզ: Հիշեցրեք երեխաներին, որ մենք ուխտ ենք կապում Երկնային Հոր հետ, երբ մկրտվում ենք, և բացատրեք, որ մենք վերանորոգում ենք այդ ուխտը, երբ ընդունում ենք հաղորդությունը: Բառաշերտեր պատրաստեք հաղորդության աղոթքների արտահայտություններով, որոնք բացատրում են, թե ինչ ենք մենք խոստանում, երբ ընդունում ենք հաղորդությունը, և ինչ է խոստանում մեզ Երկնային Հայրը (տես Վարդապետություն և Ուխտեր 20.77, 79): Բառաշերտերը տվեք մի քանի երեխաների և թող նրանք ճիշտ հերթականությամբ կանգնեն, մինչ դուք բարձրաձայն կարդաք սուրբ գրությունները:

Բառաշերտեր կարող եք գտնել sharingtime.org կայքում:

Հունիս

Ես ընտրում եմ ճիշտը, ապրելով ավետարանի սկզբունքներով

Երգ. «Նեփիի քաջությունը» (CS, 120–21)

«Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է, քանզի գիտեմ, որ Տերը պատվիրաններ չի տալիս մարդկանց զավակներին՝ առանց ուղի պատրաստելու նրանց համար, որպեսզի նրանք կարողանան իրագործել այն, ինչ նա պատվիրել է իրենց» (1 Նեփի 3.7):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ պլանավորեք, թե ինչպես կարող եք (1) Ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Հրավիրեք Հոգին. *Եթե դուք Հոգով ուսուցանեք, Սուրբ Հոգին կվկայի ավետարանի սկզբունքների ճշմարտացիության մասին, որոնք դուք ուսուցանում եք (տես* ՈՒՉԱՄԿ, *45–46):*

Շաբաթ 1. Ես աղոթում եմ Երկնային Հորը, որ ուժ ունենամ անելու այն, ինչը ճիշտ է:

Օգնեք հասկանալ *(աղոթքի քննարկում).* Երեխաներին ցույց տվեք հեռախոս կամ կապի մեկ այլ միջոց: Քննարկեք, թե այն ինչպես է օգտագործվում: Հարցրեք երեխաներին, թե մենք ինչպես կարող ենք հաղորդակցվել Երկնային Հոր հետ: Բացատրեք, որ ճիշտ ինչպես մենք հավաքում ենք համարանիշերը որևէ մեկի հետ հեռախոսով խոսելու համար, մենք կարող ենք աղոթել՝ Երկնային Հոր հետ խոսելու համար. մենք կարող ենք Նրանից ուժ խնդրել, որ անենք այն, ինչը ճիշտ է: Յուրաքանչյուր խմբի տվեք տարբեր տեսակի աղոթքների նկարներ (օրինակ, անձնական աղոթք, ընտանեկան աղոթք, ուտելիքի օրհնում կամ դասարանի աղոթք): Յուրաքանչյուր խմբի խնդրեք ցույց տալ իրենց նկարը մնացած երեխաներին և ասել նրանց, թե ինչ աղոթք է դա, երբ, որտեղ և ինչու է ասվում այդ տեսակի աղոթքը:

Օգնեք կիրառել *(խաղ խաղալ).* Անցք բացեք պլաստմասե երկու դատարկ տուփերի ծայրում, և տուփերը միացրեք բարակ պարանով: Պարանն ամուր ձգեք, և թույլ տվեք երեխաներին հերթով տուփերից մեկի մեջ արտասանել մի արտահայտություն, որը կարող են օգտագործել Երկնային Հորը աղոթելիս, երբ փորձում են անել այն, ինչ ճիշտ է (օրինակ, ճիշտն ասել, ակնածալից լինել, բարի լինել): Մեկ այլ երեխայի թույլ տվեք լսել մյուս տուփի օգնությամբ: Կիսվեք (կամ խնդրեք մի երեխայի կիսվել) փորձառությամբ, երբ Երկնային Հայրը ձեզ ուժ է տվել անելու այն, ինչը ճիշտ է: Վկայեք, որ Երկնային Հայրը լսում և պատասխանում է մեր աղոթքներին և մեզ ուժ կտա անելու այն, ինչը ճիշտ է:



Շաբաթ 2. Երբ ես վճարեմ իմ տասանորդը, Երկնային Հայրը ինձ կօրհնի:

Ներկայացրեք վարդապետությունը և օգնեք հասկանալ *(դիտել բեմականացում).* Բացատրեք, որ տասանորդը մեր վաստակած գումարի մեկ տասներորդը Իր Եկեղեցու միջոցով Տիրոջը տալն է: Երեխաներին ցույց տվեք 10 մետաղադրամ: Հարցրեք նրանց, թե տասանորդ վճարելու համար մետաղադրամներից քանիսը պիտի օգտագործվեն: Ցույց տվեք տասանորդի ծրարը և նվիրատվությունների թերթիկը և բացատրեք, որ մենք տասանորդ ենք վճարում, լրացնելով նվիրատվության թերթիկը, մեր տասանորդի հետ միասին դնելով այն ծրարի մեջ և տալով այն եպիսկոպոսին կամ նրա խորհրդականներից մեկին:

Օգնեք կիրառել *(խաղ խաղալ և վկայություններ լսել).* Ցուցադրեք նկարներ և առարկաներ, որոնք ներկայացնում են այն օրհնությունները, որոնք գալիս են տասանորդ վճարելու արդյունքում, ինչպես օրինակ՝ տաճարների, ժողովատների նկարներ, երգարան, *Երեխաների Երգարանը,* Երեխաների Խմբի դասագիրքը և սուրբ գրությունները: Ասացեք երեխաներին, որ տասանորդի ֆոնդի շնորհիվ Եկեղեցին կարողանում է ապահովել այս բաները: Ծածկեք նկարներն ու առարկաները: Վերցրեք դրանցից մեկը կամ երկուսը: Հեռացրեք ծածկը և խնդրեք երեխաներին գուշակել, թե ինչն է պակասում: Կրկնեք մի քանի անգամ: Բացատրեք, որ կան այլ օրհնություններ, որ գալիս են տասանորդ վճարելուց, որոնք տեսանելի չեն (տես 3 Նեփի 24.10): Թող մեկ կամ երկու չափահասներ պատմեն օրհնությունների մասին, որոնք նրանք ստացել են տասանորդ վճարելով:

Ցուցադրական նյութեր. *Երեխաներն ավելի լավ կսովորեն և երկար կհիշեն, եթե դուք մտքերը ներկայացնեք նկարներ և տեսողական այլ նյութեր օգտագործելով (տես* ՈՒՉԱՄԿ, *176, 182–83):*

Շաբաթ 3. Ես հնազանդվում եմ Իմաստության Խոսքին, ուտելով և խմելով այն, ինչը լավ է ինձ համար, և խուսափելով նրանից, ինչը վատ է:

Օգնեք հասկանալ *(կարդալ սուրբ գրությունները և խաղ խաղալ).* Միասին կարդացեք Ա Կորնթացիս Գ.16–17: Հրավիրեք երեխաներին ասել, թե ինչ նշանակություն ունի իրենց համար այս սուրբ գրությունը: Բացատրեք, որ Երկնային Հայրն ուզում է, որ մենք հոգանք մեր մարմինների համար: Տուփի մեջ դրեք զանազան ուտելիքների, ըմպելիքների և այլ առարկաների նկարներ, որոնք կամ լավ են, կամ էլ վատ օրգանիզմի համար (ինչպես օրինակ՝ մրգեր, բանջարեղեն, հաց, ալկոհոլ և ծխախոտ): Պատճենահանեք մանկամսուրային դասագրքի 43 էջը և այն կտրեք գլուխկոտրուկի մասերի տեսքով: Թող երեխաները հերթով տուփից նկարներ վերցնեն: Եթե նկարի առարկան լավ է մեր առողջության համար, թող երեխան գլուխկոտրուկի մի մաս դնի գրատախտակին: Եթե առարկան վատն է, հեռացրեք գլուխկոտրուկի այդ մասը: Շարունակեք խաղալ, մինչև գլուխկոտրուկի մասերը լրանան (դուք պետք է տուփի մեջ ավելի շատ լավ բաներ ունենաք): Խնդրեք մի չափահասի կամ երեխայի կիսվել օրհնություններով, որոնք նա ստացել է Իմաստության Խոսքին հնազանդվելու արդյունքում (տես ՎԿՈՒ 89.18–21):



Մանկամսուրային դասագիրքը կարելի է գտնել sharingtime.lds.org կայքում:

Շաբաթ 4. Երբ ես պարկեշտ եմ հագնվում, ես ակնածանքով եմ վերաբերվում իմ մարմնին, որը պարգև է Աստծո կողմից:

Ներկայացրեք վարդապետությունը *(նկարի դիտել և կարդալ սուրբ գրությունները).* Գրատախտակին գրեք հետևյալը. «Իմ _____ է _____:» Ցուցադրեք տաճարի մի նկար: Հարցրեք, «Ինչու՞ են տաճարները այդքան առանձնահատուկ»: Թող երեխաները բացեն Ա Կորնթացիս Զ.19: Խնդրեք նրանց ուշադիր լսել, թե ինչ է այն ասում իրենց մարմինների մասին, մինչձեզ հետ միասին բարձրաձայն կարդում են սուրբ գրությունը: Հարցրեք երեխաներին, թե որ բառերը կլրացնեն գրատախտակին գրված նախադասությունը (*մարմին, տաճար*): Հրավիրեք երեխաներին կանգնել և միասին ասել նախադասությունը:

Օգնեք հասկանալ և կիրառել *(երգ երգել և քննարկել).* Ասացեք երեխաներին, որ մեր մարմինները տաճարներ են, որտեղ կարող է բնակվել Սուրբ Հոգին: Երգեք «Տերն ինձ մի տաճար պարգևեց» (*CS,* 153) երգի առաջին տողը: Հրավիրեք երեխաներին կիսվել, թե ինչպես է ուզում Երկնային Հայրը, որ մենք հագնվենք և ինչու: Բացատրեք, որ Աստծո մարգարեները միշտ խորհուրդ են տվել Նրա զավակներին պարկեշտ հագնվել: Հրավիրեք երեխաներին լսել, թե իրենց մարմնի որ մասերը պետք է ծածկված լինեն, կարդալով իրենց համար *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի «Հագուստ և արտաքին տեսք» բաժնից: Խնդրեք երեխաներին մտածել պարկեշտ հագնվելու մի ձևի մասին: Մի փափուկ առարկա նետեք երեխաներից մեկին և հրավիրեք այդ երեխային կիսվել իր գաղափարով: Խնդրեք այդ երեխային առարկան նետել մեկ այլ երեխայի, ով կկիսվի իր գաղափարով: Շարունակեք մնացած երեխաների հետ:



Հուլիս

Ես ընտրում եմ ճիշտը, ապրելով ավետարանի սկզբունքներով

Երգ. «Իմաստուն մարդը և անխելք մարդը»
(CS, 281) կամ ձեր ընտրությամբ մի երգ
Մանկական երգարանից

«Ուստի, եկեք հավատարիմ լինենք Տիրոջ պատվիրանները պահելիս» (1 Նեփի 3.16):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Բառաշերտեր կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում:

Շաբաթ 1. Ծոմապահությունն ու աղոթքը կարող են ամրացնել իմ վկայությունը:

Ներկայացրեք վարդապետությունը *(դիտել առարկայական դաս).* Պատրաստեք երկու բառաշերտ՝ *Ծոմապահություն* և *Աղոթք:* Հրավիրեք երկու երեխայի իրար մոտ կանգնել, և յուրաքանչյուր երեխայի տվեք բառաշերտերից մեկը: Թող մի երեխա քայլելով անցնի նրանց միջով: Խնդրեք առաջին երկու երեխաներին ամուր բռնել իրար ձեռքերը և խնդրեք մյուս երեխային կրկին փորձել քայլել նրանց միջով: Նշեք, թե որքան ավելի ուժեղ են երեխաները, երբ նրանք միասին են: Բացատրեք, որ ծոմապահությունն ու աղոթքը ավելի զորավոր են, երբ մենք դրանք միասին ենք օգտագործում: Գրատախտակին գրեք «Ծոմապահությունն ու աղոթքը կարող են ամրացնել իմ վկայությունը», և թող երեխաները միասին կրկնեն այն:

Օգնեք հասկանալ *(լսել սուրբ գրություններ և մասնակցել առարկայական դասի).* Խնդրեք երեխաներին ուշադրությամբ լսել, թե ինչ բաներ արեցին Մոսիայի որդիները ավետարանում ամուր լինելու համար, նրանց համար կարդալով Ալմա 17.2–3: Հրավիրեք երեխաներին ցուցադրել իրենց ուժը. Լարելով մկանները, ամեն անգամ, երբ լսեն որևէ բան, որն օգնել է Մոսիայի որդիներին դառնալ ուժեղ:

Ծոմապահության վերաբերյալ զրույց վարեք՝ տալով մի քանի այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «Ի՞նչ է ծոմապահությունը», «Ինչո՞ւ մենք պետք է ծոմ պահենք» և «Ինչո՞ւ մենք պետք է աղոթենք, երբ ծոմ ենք պահում» (տես Ջոզեֆ Բ. Վիրթլին, «Ծոմապահության օրենքը», *Ensign,* May 2001, 73–75): Թող զրույցին մասնակցող յուրաքանչյուր երեխա բռնի թելի կամ պարանի մի ծայրից: Յուրաքանչյուր պարանի մյուս ծայրը բռնեք ձեր ձեռքում: Զրույցի վերջում խնդրեք պարանները բռնող երեխաներին գալ սենյակի կենտրոն և իրենց բոլոր պարանները միահյուսել իրար՝ դարձնելով այն ամուր պարան: Բացատրեք, որ բարակ պարաններից յուրաքանչյուրի ավելացումը պարանն ավելի ամուր է դարձնում: Օգնեք երեխաներին հասկանալ, որ նման ձևով՝ ամեն անգամ ծոմ պահելով և աղոթելով, մենք ամրացնում ենք մեր վկայությունը:

Տեսողական ներկայացումները օգնում են երեխաներին հասկանալ վերացական գաղափարները:

Հուշում. *Երբ դուք սովորեցնում եք ծոմապահության մասին, հիշեք, որ կարիք չկա, որ կրտսեր երեխաները ծոմ պահեն:*

Շաբաթ 2. Բարի լինելը նշանակում է մյուսների համար հաճելի բաներ անել և ասել:

Ներկայացրեք վարդապետությունը. *(անգիր սովորել սուրբ գրություն).* Գրատախտակին գրեք «Իրար հետ քաղցր եղէք» (Եփեսացիս Դ.32), յուրաքանչյուր բառի տակ գրելով 1-ից մինչև 4 թվերը: Յուրաքանչյուր երեխայի նշանակեք 1-ից մինչև 4 թվերից մեկը: Սկզբում թող կանգնեն բոլոր 1-երը և ասեն «Իրար» և հետո շուտ նստեն: Հետո թող կանգնեն 2-ները և ասեն «հետ» և արագ նստեն: Շարունակեք մինչև արտահայտությունն ամբողջությամբ ասվի: Կրկնեք մի քանի անգամ: Այնուհետև թող բոլոր երեխաները միասին կրկնեն արտահայտությունը:

Օգնեք հասկանալ *(պատմություն լսել և երգ երգել).* Երեխաներին պատմեք բարի լինելու մասին մի պատմություն, օրինակ՝ «Պաշտպանել Քալեբին» պատմությունը (*Ընկեր,* մարտ 2009, 4–5): Խնդրեք նրանց բարձրացնել իրենց

երկու բթամատերը, երբ պատմության մեջ լսում են բարի արարքի մասին, և երկու բթամատերը ցած ուղղել, երբ լսում են անբարյացակամ արարքի մասին: Երգեք «Բարին ինձնից պիտ գա» (*CS,* 145) երգը: Խնդրեք երեխաներին կանգնել, երբ նրանք երգեն այն մասին, թե ում նկատմամբ պետք է բարի լինեն: Կրկին երգեք երգը և խնդրեք նրանց ուղղել իրենց երկու բթամատերը դեպի իրենց, երբ երգեն «Բարին ինձնից պիտ գա» խոսքերը:

Օգնեք կիրառել *(կիսվել բարի լինելու եղանակներով).* Ներկայացրեք երեխաների կյանքից մի շարք մարդկանց (ինչպես օրինակ՝ հայր, մայր, քույր, եղբայր, պապիկ, ընկեր կամ ուսուցիչ) և նայնականացրեք նրանց բառաշերտի վրա գրված բառի, նկարի կամ հասարակ առարկաների հետ (ինչպես օրինակ՝ փողկապը կարող է ներկայացնել հայրիկին, ձեռնափայտը՝ պապիկին, և այլն): Առարկաները տվեք մի քանի երեխաների և նրանց հրավիրեք գալ սենյակի կենտրոն: Թող յուրաքանչյուր երեխա կիսվի որևէ հաճելի բանով, որը կարող է ասել կամ անել այն անձնավորության համար, ում ներկայացնում է իր առարկան: Ապա խնդրեք նրանց փոխանցել իրենց բառաշերտերը, նկարները կամ առարկաները ուրիշ երեխաների: Կրկնեք, եթե ժամանակը թույլ է տալիս:

Ներկայացումների մեջ երեխաներին ներգրավելը ակտիվ կպահի երեխաներին և կօգնի նաև գրավել մնացած երեխաների ուշադրությունը:

Շաբաթ 3. Ակնածանքը՝ խորը հարգանք ու սեր է առ Աստված:

Ներկայացրեք վարդապետությունը *(երգ երգել).* Թելից պատրաստեք մի քանի վզնոց, որոնցից յուրաքանչյուրին ամրացված է թղթե սրտիկ: Յուրաքանչյուր սրտիկի վրա գրեք «Ակնածանքը սեր է» (*CS,* 31) երգի հիմնական մի բառ կամ արտահայտություն, (օրինակ, *լուռ նստել, մտածել, զգալ,* և այսպես շարունակ): Հրավիրեք մի քանի երեխաների կրել վզնոցները: Երգեք «Ակնածանքը սեր է» երգը և խնդրեք վզնոց կրող երեխաներին ակնածանքով քայլել դեպի սենյակի կենտրոնը, երբ երգում են իր սրտիկի վրայի բառը: Վզնոց կրող երեխաներին հրավիրեք հաջորդականությամբ կանգնել և կրկին երգել երգը:

Սրտիկներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում:

Օգնեք կիրառել *(քննարկումներ ակնածանքի մասին).* Բառաշերտեր պատրաստեք կամ հասարակ նկարներ նկարեք, որտեղ պատկերված են աչքեր, ձեռքեր, ոտքեր, ականջներ, բերան և միտք: Երեխաներին խմբերի բաժանեք, և յուրաքանչյուր խմբի թույլ տվեք ընտրել բառաշերտերից կամ նկարներից երկուսը: Թող յուրաքանչյուր խումբ կիսվի (խոսքերով և գործողություններով) մի քանի եղանակներով, որով իրենց մարմնի այդ մասը կարող է ակնածալից լինել՝ հարգանք և սեր ցուցաբերելով առ Աստված:



Պատկերներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում:

Շաբաթ 4. Ազնվությունը ճիշտն ասելն է՝ անկախ հետևանքներից:

Օգնեք հասկանալ *(քննարկում հետևանքների մասին).* Նախապատրաստեք մի քանի իրավիճակների ուսումնասիրություններ (տես *ՈՒՀՍՄԿ,* 161–62), որոնցում երեխաները կանգնած կլինեն ազնիվ կամ անազնիվ լինելու ընտրության առջև: Օրինակ, «Դուք խփել եք ձեր եղբորը, և ձեր մայրը հարցնում է, թե ինչու է նա լաց լինում»: Հարցրեք. «Ինչպիսի՞ն կլինեն ազնիվ լինելու հետևանքները»: Այնուհետև հարցրեք. «Ինչպիսի՞ն կլինեն անազնիվ լինելու հետևանքները»: Օգնեք երեխաներին հասկանալ, որ ազնվությանը անմիջապես հետևող հետևանքները կարող են դժվարին լինել, սակայն տևական հետևանքները առաջնորդում են դեպի խաղաղություն և երջանկություն:

Օգնեք կիրառել *(հորինել հանգավոր փոքր բանաստեղծություն).* Հրավիրեք յուրաքանչյուր դասարանի (նրանց ուսուցիչների օգնությամբ) հորինել մեկ տողանոց արտահայտություն կամ հանգավոր փոքր բանաստեղծություն ազնվության վերաբերյալ: Օրինակ, «Եթե միշտ ճիշտն խոսեմ, երջանիկ ես կլինեմ»: Հրավիրեք յուրաքանչյուր դասարանի կիսվել իրենց արտահայտությամբ մնացած երեխաների հետ: Քաջալերեք նրանց կրկնել արտահայտությունը, երբ կանգնած կլինեն անազնիվ լինելու գայթակղության առաջ:

Սուրբ գրություններ. *Եթե երեխաներին խնդրեք կարդալ իրենց սուրբ գրություններից, դա կամրապնդի սուրբ գրքերի կարևորությունը և կհրավիրի Հոգին: Եթե հնարավոր է, հրավիրեք երեխաներին իրենց սեփական սուրբ գրություններում նշել հատվածներ և հետո դրանք միասին կարդալ:*

Օգոստոս

Երգ. «Փորձում եմ նմանվել Հիսուսին» (CS, 78–79)

Պատմություններ. *Պատմություններ պատմելը զրաղում է երեխաների ուշադրությունը և նրանց օգնում է հասկանալ վարդապետությունը: Պատմությունները բավականաչափ լավ սովորեք, որպեսզի կարողանաք արտահայտիչ կերպով և ոգևորությամբ պատմել դրանք ձեր սեփական բառերով:*

Կայարաններ. *Եթե ձեր Երեխաների Խումբը մեծ է, ապա կարող եք խնդրել, որ երեխաների փոխարեն ղեկավարները տեղափոխվեն կայարանից կայարան:*

Ես որոշում եմ իմ կյանքը լցնել բաներով, որոնք հրավիրում են Հոգին

«Եթե մի բան առաքինի է, գեղեցիկ, բարեհամբավ, գովեստի արժանի,- մենք ձգտում ենք այդ ամենին» (Հավատքի հանգանակ 1.13):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Շաբաթ 1. Լավ ընկերներ ունենալը կօգնի ինձ ընտրել ճիշտը:

Օգնեք հասկանալ և կիրառել *(պատմություն լսել).* Պատմեք հետևյալ պատմությունը. «Երկու տղաներ ճանապարհի մոտ գտան մի զույգ մաշված կոշիկներ: Հեռվում նրանք տեսան արտում աշխատող մի մարդու: Տղաներից մեկն առաջարկեց, որ նրանք թաքցնեն կոշիկները և հետո տեսնեն, թե ինչ վերաբերմունք կցուցաբերի մարդը»: Խնդրեք երեխաներին ասել, թե իրենք ինչ կասեին այս տղային: Այնուհետև պատմեք պատմության մնացած մասը: «Մյուս տղան առաջարկեց, որ կոշիկները թաքցնելու փոխարեն յուրաքանչյուր կոշիկի մեջ դնեն մեկական արծաթադրամ, և հենց դա էլ նրանք արեցին: Շուտով մարդը վերադարձավ: Երբ նա գտավ դրամները, լցվեց երախտագիտությամբ և ծնկի գալով գոհաբանության աղոթք ասաց: Նա խոսեց իր կնոջ մասին, ով հիվանդ էր, և իր երեխաների մասին, ովքեր ուտելիք չունեին, և նա խնդրեց Տիրոջը, որ օրհնի նրանց, ովքեր օգնել են իրեն: Տղաները ջերմ մի բան զգացին իրենց սրտերում և շնորհակալ էին, որ ընտրեցին ճիշտը» (տես Gordon B. Hinckley, in Conference Report, Apr. 1993, 71, կամ *Ensign,* May 1993, 54): Հրավիրեք մի քանի երեխաների պատմել, թե ինչպես են լավ ընկերները նրանց օգնել ընտրել ճիշտը:

Շաբաթ 2. Ես պետք է կարդամ, լսեմ և դիտեմ այնպիսի բաներ, որոնք հաճելի են Երկնային Հորը:

Ներկայացրեք վարդապետությունը *(դիտել առարկայական դաս).* Երեխաներին ցույց տվեք մրգով լի մի աման և աղբով լի մի աման: Հարցրեք, թե որը լավ կլինի ուտել և ինչու: Բացատրեք, որ Երկնային Հայրը ուզում է, որ մենք լցնենք մեր մտքերը բաներով, որոնք լավ են մեզ համար, և ոչ թե բաներով, որոնք կործանարար են: Հրավիրեք նրանց ասել. «Ես պետք է կարդամ, լսեմ և դիտեմ բաներ, որոնք հաճելի են Երկնային Հորը», կատարելով ձեռքի պարզ շարժումներ՝ *կարդալ, լսել* և *դիտել* բառերին համապատասխան:

Օգնեք հասկանալ *(քննարկել վարդապետությունը).* Ասացեք երեխաներին, որ եթե մենք կատարում ենք Երկնային Հորը ոչ հաճելի ընտրություններ, մենք կարող ենք կորցնել շատ կարևոր մի բան: Խնդրեք նրանց լսել, թե որն է այդ կարևոր բանը, մինչ դուք կարդաք *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի «Զվարճանք և լրատվամիջոցներ» բաժնի առաջին պարբերությունը (տես նաև «Ավետարանի իմ սկզբունքները»): Հարցրեք երեխաներին, թե արդյոք նրանք լսեցին, թե ինչ ենք մենք կորցնում, երբ սխալ ընտրություններ ենք կատարում (Հոգին): Երեխաներին բաժանեք երեք խմբի և թող նրանք հերթով այցելեն երեք կայարաններ՝ «Կարդալ», «Լսել» և «Դիտել»: Յուրաքանչյուր կայարանում հրավիրեք երեխաներին կարդալ, լսել կամ դիտել մի բան, որը հաճելի է Երկնային Հորը: Քննարկեք, թե ինչպես են իրենց զգում, երբ կարդում, լսում և դիտում են բաներ, որոնք հաճելի են Աստծուն:

Շաբաթ 3 և 4. Հանգստության օրը ես կանեմ բաներ, որոնք ինձ կօգնեն մոտ մնալ Երկնային Հորը:

Ներկայացրեք վարդապետությունը *(անգիր սովորել սուրբ գրություն).* Ասացեք երեխաներին, որ դուք նրանց որոշ հուշումներ կտաք մի կարևոր ուղերձ բացահայտելու համար: Ելից Ի.8-ի յուրաքանչյուր բառի առաջին տառը գրեք գրատախտակին (*Հ Հ Օ Ն Ս Պ Հ*): Բացատրեք, որ տառերը ուղերձի յուրաքանչյուր բառի առաջին տառերն են: Տվեք հաջորդ հուշումը՝ ցուցադրելով Մովսեսի և Տասը Պատվիրանների նկարը: Հետո հրավիրեք երեխաներին բացել Ելից Լ.8 և կարդալ այն միասին: Թույլ տվեք, որ երեխաները բացահայտեն գրատախտակին գրված տառերի և սուրբ գրության միջև եղած կապը: Օգնեք երեխաներին անգիր սովորել սուրբ գրությունը, ցույց տալով գրատախտակի տառերը, մինչ նրանք մի քանի անգամ կրկնեն սուրբ գրությունը:

Օգնեք հասկանալ *(քննարկել և զուսարկել).* Երեխաներին բաժանեք չորս խմբերի: Յուրաքանչյուր խմբի հանձնարարեք կարդալ *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի «Պահել Հանգստյան Օրը» բաժնից մի պարբերություն: Խնդրեք նրանց քննարկել պարբերությունը իրենց խմբերում և հետո կիսվել մնացած երեխաների հետ, թե ինչ նրանք սովորեցին: Յուրաքանչյուր երեխայի տվեք թերթիկներ և հրավիրեք նրանց նկարել որոշ լավ բաներ, որ կարող են անել հանգստյան օրը: Խնդրեք մի քանի երեխաների կիսվել իրենց նկարներով Երեխաների Խմբի մնացած երեխաների հետ: Խրախուսեք նրանց տանը իրենց ընտանիքների հետ կիսվել իրենց սովորածով:

Օգնեք հասկանալ *(կատարել սուրբգրքյան վարժություն).* Նախքան Երեխաների Խմբի դասի սկսվելը նախապատրաստեք մի զամբյուղ, որը լի է թղթի կտորներով, որոնք ներկայացնում են մանանա, որը կօգտագործվի այս վարժության ընթացքում: Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները.

Ի՞նչ ուտելիք տվեց Տերը իսրայելացիներին անապատում:
Որքա՞ն պետք է նրանք հավաքեին յուրաքանչյուր օր:
Ի՞նչ պետք է նրանք անեին վեցերորդ օրը:
Ի՞նչն էր տարբեր Հանգստյան օրը:

Թող երեխաները լսեն պատասխանները, մինչ դուք պատմեք մանանա հավաքելու իսրայելցիների պատմությունը (տես Ելից ԺԶ.11–31): Խնդրեք նրանց կանգնել, երբ նրանք լսեն հարցերից մեկի պատասխանը: Թող մի երեխա վերապատմի պատմության այն մասը, որը պատասխանում է հարցին: Այնուհետև շարունակեք պատմության մնացած մասերին համապատասխան: Երբ վերջացնեք, խոսեք երեխաների հետ այն մասին, թե ինչու Տերը չէր ուզում, որ իսրայելցիները մանանա հավաքեին Հանգստյան օրը: Թող երեխաները փակեն իրենց աչքերը և ձևացնեն, թե քնած են: Արագ կերպով «մանանան» ցրեք սենյակով մեկ: Խնդրեք երեխաներին բացել իրենց աչքերը և հավաքել մանանայի իրենց բաժինը (մեկ կամ երկու կտորներ): Խնդրեք երեխաներին մանանան հետ դնել զամբյուղի մեջ: Մինչ ամեն երեխա անում է դա, խնդրեք նրան կիսվել Հանգստյան օրը սուրբ պահելու մի պատշաճ եղանակով:

Վարժությունները Երեխաների Խմբի չափերի հետ հարմարեցնելը կօգնի ավելի շատ երեխաներ ներգրավել: Եթե ձեր Երեխաների Խումբը մեծ է, այս վարժության համար, մի քանի զամբյուղ պատրաստեք և թույլ տվեք երեխաներին կիսվել ավելի փոքր խմբերի:

Նկարել. *Երբ երեխաները նկարում են իրենց սովորածը, նրանք ավելի խորն են հասկանում վարդապետությունը: Նրանց ուսուցումը ավելի խորացնելու համար քաջալերեք նրանց կիսվել իրենց նկարներով ընտանիքների հետ:*

Օգնություն երաժշտության ղեկավարին

Որպեսզի օգնեք երեխաներին սովորել «Փորձում եմ նմանվել Հիսուսին» երգը (*CS,* 78–79), կարող եք անել հետևյալը.

- Երգեք երգը երեխաների համար: Հրավիրեք նրանց հաշվել իրենց մատների վրա, թե քանի անգամ եք դուք երգում *փորձ* կամ *փորձել* բառերը: Կրկին երգեք երգը և խնդրեք երեխաներին ծափ տալ ռիթմը, մինչ նրանք երգում են:
- Երեխաների Խմբի դասասենյակում փաքցրեք երգի յուրաքանչյուր արտահայտության հիմնական միտքն արտահայտող բառին համապատասխանող պարզ նկարներ (ինչպես օրինակ *նմանվեք, հետևեք, սեր, արեք և ասեք, փորձվեք* և *լսեք*)՝ ազատ թողնելով դասասենյակի դիմացի պատը: Խնդրեք երեխաներին լսել, և սկսեք երգել երգը: Հրավիրեք նրանց մատով ցույց տալ նկարը, որն, իրենց կարծիքով, համընկնում է ձեր երգած բառերի հետ: Խնդրեք մի երեխայի այն տեղափոխել դիմացի պատի վրա: Թող բոլորը երգեն երգի այդ մասը: Շարունակեք երգել և կրկնեք վարժությունը յուրաքանչյուր նկարի համար: Հետո թող երեխաները երգեն ամբողջ երգը մի քանի անգամ: Հակիրճ վկայություն բերեք այն մասին, թե որքան կարևոր է աշխատել նմանվել Հիսուսին:

Պատկերներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում:

Սեպտեմբեր

Տասը պատվիրանները սովորեցնում են ինձ սիրել Աստծուն և Նրա զավակներին

«Եթե ինձ սիրում ես, ծառայիր ինձ և պահիր իմ բոլոր պատվիրանները» (ՎԱՈՒ 42.29):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Շաբաթ 1. Մենք օրհնվում ենք, երբ պահում ենք պատվիրանները:

Ներկայացրեք վարդապետությունը *(առաջնակարգ դասի դիտում).* Հրավիրեք մի մոր իր մանկիկին բերել միացյալ ժամի: Հրավիրեք երեխաներին կիսվել մի քանի կանոններով, որոնք կօգնեն ապահով պահել երեխային: Ասեք երեխաներին, որ մենք բոլորս Երկնային Հոր զավակներն ենք. Նա սիրում է մեզ և տալիս է մեզ կանոններ կամ պատվիրաններ, որոնք մեզ ապահով ու երջանիկ կպահեն: Ցույց տվեք Մովսեսի և Տասը Պատվիրանների նկարը և համառոտ պատմեք երեխաներին, թե ինչպես է Մովսեսը ստացել պատվիրանները (տես Ելից ԺԹ–Ի):



Օգնեք հասկանալ *(երգել երգեր).* Հետևյալ երեք արտահայտությունները դրեք գրատախտակի վրա. «Հարգեք և երկրպագեք Աստծուն», «Պատվեք ծնողներին» և «Հարգեք ուրիշներին»: Ասացեք երեխաներին, որ Տասը Պատվիրանները կարող են բաժանվել այս երեք խմբերի: Երեխաներին բաժանեք խմբերի և նրանցից յուրաքանչյուրին տվեք մի երգ, որը վերաբերվում է այդխմբերից մեկին: Խնդրեք յուրաքանչյուր խմբի որոշել, թե ով կերգի երգը (օրինակ, միայն տղաները, միայն աղջիկները կամ նրանք, ովքեր ունեն կարմիր գույնի հագուստ): Երգը երգելուց հետո մի երեխայի խնդրեք երգն ամրացնել համապատասխան դասի տակ: Խորհեք հետևյալ երգերը օգտագործելու շուրջ. «Կիրակի» (*CS,* 196), «Ես արագ կհնազանդվեմ» (*CS,* 197), «Իմ հայրը» (*CS,* 211), «Հիսուս Քրիստոսի Եկեղեցին» (*CS,* 77), և «Բարին ինձնից պիտ գա» (*CS,* 145):

Օգնեք կիրառել *(երգ երգել).* Երգեք «Պահեք պատվիրանները» (*CS,* 146–47), և խնդրեք երեխաներին լսել խոստումները, որոնք մենք ստանում ենք, երբ պահում ենք պատվիրանները: Հրավիրեք նրանց կիսվել, թե ինչպես են նրանք օրհնվում, երբ պահում են պատվիրանները:

Փոքր խմբեր. *Երեխաներին խմբերի բաժանելը կարող է արդյունավետ միջոց լինել՝ ավելի շատ երեխաների դասին ակտիվորեն ներգրավելու համար:*

Շաբաթ 2. Ես պետք է հարգեմ և երկրպագեմ Աստծուն:

Օգնեք հասկանալ և կիրառել *(կարդալ սուրբ գրությունները).* Բացատրեք, որ առաջին չորս պատվիրանները Երկնային Հայրը տվել է Մովսեսին, որը մեզ սովորեցներ, որ մենք պետք է հարգենք և երկրպագենք Աստծուն: Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները: Չորս թղթի վրա գրեք սուրբ գրությունների հղումները:

1. Բացի ինձանից ուրիշ ____ չունենաս: (Ելից Ի.3)
2. Քեզ համար . . . չշինես ____ ____: (Ելից Լ.4)
3. Քո Եհովայ Աստուծոյ . . . չհիշես ____ ____: (Ելից Լ.7)
4. Հիշիր ____ ____նորան սուրբ պահելու համար: (Ելից Ի.8)

Երեխաներին բաժանեք չորս խմբերի: Յուրաքանչյուր խմբին տվեք սուրբ գրությունների հղումներից մեկը, խնդրեք նրանց կարդալ սուրբ գրությունն ու գտնել համապատասխան նախադասությունը գրատախտակի վրա: Խնդրեք առաջին խմբին լրացնել իրենց բացթողումը գրատախտակի վրա և առաջնորդել մնացած երեխաներին միասին կրկնել նախադասությունը: Քննարկեք նախադասության իմաստը և թող երեխաները առաջարկություններ անեն, թե ինչ կարող են իրենք անել դրան հնազանդվելու համար: Նրանց առաջարկությունները գրեք գրատախտակին: Նույնը կրկնեք մյուս երեք խմբերի համար: Խրախուսեք երեխաներին ընտրել գրատախտակի վրա գրված առաջարկություններից մեկը՝ շաբաթվա ընթացքում դրա վրա աշխատելու համար:

Շաբաթ 3. Ես պետք է պատվեմ իմ ծնողներին:

Ներկայացրեք վարդապետությունը *(անգիր սովորել սուրբ գրություն).* Հակիրճ ձևով վերհիշեք պատվիրանները, որոնք երեխաները սովորել են անցած շաբաթ և խնդրեք մի քանի երեխաների կիսվել, թե ինչ են իրենք արել այդ պատվիրաններով ապրելու համար: Երեխաներին բաժանեք չորս խմբի և յուրաքանչյուր խմբին տվեք ներքևում ցուցադրված բառաշերտերից մեկը (տես Ելից Ի.12):

Հրավիրեք առաջին խմբին կանգնել, կրկնել իրենց բառաշերտի բառերը և նստել, որին հերթով կհետևեն մնացած խմբերը: Խնդրեք խմբերին իրենց բառաշերտերը փոխանցել մյուս խմբերին և կրկնել վարժությունը այնքան ժամանակ, մինչև բոլոր խմբերը կարդան յուրաքանչյուր բառաշերտը: Հրավիրեք բոլոր խմբերին կանգնել և միասին կրկնել պատվիրանը:

Օգնեք կիրառել *(խաղ խաղալ).* Երեխաներին խմբերի բաժանեք: Խնդրեք խմբերից յուրաքանչյուրին մտածել, թե ինչ կարող են անել իրենց ծնողներին պատվելու համար: Հրավիրեք յուրաքանչյուր խմբի մնջախաղի օգնությամբ ներկայացնել իրենց արարքը և խնդրեք մնացած երեխաներին գուշակել, թե ինչ են նրանք անում: Երբ նրանք ճիշտ գուշակեն, խնդրեք խմբի երեխաներից մեկին իրենց գաղափարը գրել գրատախտակի վրա:

Պատվիր քո հորը և քո մորը	**որ քո օրերը**	**երկար լինեն այն երկրի վրա**	**որ քո Եհովա Աստվածը կտա քեզ:**

Բառաշերտեր կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում:

Հուշում. Դասը տրված ձևաչափը կարող է չհամապատասխանել ձեր երեխաների կարիքներին: Դուք գիտեք նրանց հնարավորություններն ու հանգամանքները և կարող եք հարմարեցնել միացյալ ժամի գաղափարները ձեր Երեխաների Խմբում դրանք արդյունավետ դարձնելու համար:

Շաբաթ 4. Ես պետք է հարգեմ ուրիշներին:

Ներկայացրեք Ծրագիրը *(քննարկեք հարգանքը).* Ասացեք երեխաներին, որ այսօր շատ կարևոր անձնավորություն է գալու Երեխաների Խումբ: Խնդրեք երեխաներին ցույց տալ, թե ինչպես կարող են նրանք հարգանք ցուցաբերել այդ անձի հանդեպ: Թող նրանք գուշակեն, թե ով կարող է լինել այդ անձնավորությունը: Կիսաձայն երգեք «Զավակն եմ Աստծո» երգը, ամրացնելով թղթե աստղ յուրաքանչյուր երեխայի վրա: Բացատրեք, որ յուրաքանչյուր անձնավորություն կարևոր է և որ մենք պետք է բոլորին հարգանքով վերաբերվենք: Ասացեք երեխաներին, որ Տասը Պատվիրաններից մի քանիսը մեզ սովորեցնում են, թե ինչպես պետք է հարգենք ուրիշներին:

Օգնեք հասկանալ *(քննարկել իրավիճակների ուսումնասիրություններ).* Բացատրեք, որ Տասը Պատվիրանները մեզ սովորեցնում են, որ մենք չպետք է գողանանք կամ ստենք. սա ուրիշներին հարգելու ճանապարհներից մեկն է: Նախապատրաստեք մի քանի իրավիճակների ուսումնասիրություններ (տես *ՈՒՉԱՄԿ,* 161–62), որոնք ներկայացնում են իրավիճակներ, որոնցում երեխաները կանգնում են ազնվության ընտրության առջև: Բաժանեք երեխաներին խմբերի և յուրաքանչյուր խմբի տվեք մի քանի իրավիճակների ուսումնասիրություններ:

Հնարավորություններ փնտրեք սեր ցուցաբերելու յուրաքանչյուր երեխայի հանդեպ: Երբ դուք սեր եք ցուցաբերում նրանց հանդեպ, ում սովորեցնում եք, նրանք ավելի դյուրընկալ են դառնում Հոգու նկատմամբ և ավելի խանդավառ՝ սովորելու (տես ՈՒՉԱՄԿ, 31):

Քահանայության օրհնությունները մատչելի են բոլորին

«Եվ նաև, բոլոր նրանք, ովքեր ընդունում են այդ քահանայությունը, ընդունում են ինձ, ասում է Տերը» (ՎԱՈՒ 84.35):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Հարցեր. Երեխաներին արդյունավետ հարցեր տալը կօգնի նրանց խելացի պատասխաններ տալ: Խուսափեք միայն այո կամ ոչ պատասխաններ ակնկալող հարցերից:

Շաբաթ 1. Արժանի երիտասարդ տղաները 12 տարեկանում քահանայություն են ստանում:

Ներկայացրեք վարդապետությունը *(նկարի դիտում).* Երեխաներին ցույց տվեք Հիսուս Քրիստոսի նկարը, որտեղ Նա առաջին անգամ բաժանեց հաղորդությունը: Բացատրեք, որ Քրիստոսը հաղորդություն մատուցեց Իր Առաքյալներին և Իր աշակերտներին Մորմոնի Գրքում, և խնդրեց նրանց Իր հեռանալուց հետո շարունակել օրհնել և բաժանել հաղորդությունը: Միասին կարդացեք 3 Նեփի 18.5–6: Երեխաներին տվեք այսպիսի հարցեր. Ո՞վ է օրհնում հաղորդությունը մեր օրերում: Ո՞վ է բաժանում հաղորդությունը: Ի՞նչ զորություն պետք է ունենա անձը՝ հաղորդությունը օրհնելու և բաժանելու համար:

Օգնեք հասկանալ *(քննարկել վարդապետությունը).* Բացատրեք, որ քահանայությունը Աստծո զորությունն է՝ երկրի վրա մարդկանց ծառայելու և օրհնելու համար: Վերջին օրերում Քրիստոսը ուսուցանել է մեզ, որ ցանկացած տղամարդ կարող է ունենալ քահանայություն, եթե բավարարում է երկու պահանջի: Առաջինը որոշակի տարիքի լինելու պահանջն է: Խնդրեք երեխաներին կանգնել, երբ բարձրաձայնեք այն տարիքը, երբ տղան կարող է քահանայություն ստանալ: Դանդաղ հաշվեք մեկից մինչև տասներկուսը: Ասացեք երեխաներին, որ մյուս պահանջն այն է, որ տղան պետք է արժանի լինի: Բացատրեք, թե ինչ է նշանակում արժանի լինելը և որ տղաները և աղջիկները կարող են օգտագործել «Ավետարանի իմ չափանիշները» գրքույկը, որը կօգնի նրանց իմանալ, թե ինչպես պետք է ապրել արժանի ձևով:

Օգնեք կիրառել *(մասնակցել ֆիզիկական վարժության).* Երեխաներին խմբերի բաժանեք: Յուրաքանչյուր խմբի հանձնարարեք «Ավետարանի իմ չափանիշները» գրքույկից մեկական չափանիշ: Խնդրեք յուրաքանչյուր խմբի մտածել հասարակ գործողության մասին, որը կներկայացնի իրենց չափանիշը: Մի քանի բառով ներկայացրեք չափանիշը, և թող նշանակված խումբը կանգնի և ցուցադրի իրենց գործողությունը: Կրկնեք մինչև բոլոր խմբերը կիսվեն իրենց մտքերով: Բացատրեք, որ այս չափանիշներով ապրելը օգնում է տղաներին արժանի մնալ քահանայություն կրելուն և քահանայության արարողությունները ստանալուն, իսկ աղջիկներին՝ արժանի մնալ քահանայության արարողությունները ստանալուն, ինչպիսիք են՝ մկրտությունը և տաճարային արարողությունները:

Հուշում. Զգույշ եղեք երեխաների ընտանեկան իրավիճակների հանդեպ: Հատուկ շեշտեք, որ քահանայությունը օրհնում է յուրաքանչյուրին՝ անկախ սեռից, և որ երեխաները, ովքեր իրենց տանը չունեն քահանայություն կրող, կարող են օրհնվել տնային ուսուցիչների, հարազատների և Եկեղեցու ղեկավարների միջոցով:

Շաբաթ 2. Քահանայության միջոցով մենք ստանում ենք փրկության արարողություններ:

Ներկայացրեք վարդապետությունը *(առարկայական դասի դիտում).* Թող մի երեխա բռնի բացված անձրևանոց: Թող մի քանի երեխաներ կանգնեն դրա տակ: Անձրևանոցը համեմատեք քահանայության հետ: Նշեք, որ եթե անձրև գար, ապա ոչ թե միայն այն բռնողը, այլ անձրևանոցի տակ գտնվող բոլոր երեխաները կստանային չոր մնալու օրհնությունը: Նմանապես, Աստված Իր քահանայության միջոցով ուղի

Առարկայական դասերը կարող են օգտագործվել հետաքրքրություն առաջացնելու, երեխաների ուշադրությունը կենտրոնացնելու կամ ավետարանի սկզբունքը ներկայացնելու համար:

է պատրաստել, որով կօրհնվեն Նրա բոլոր զավակները: Քահանայության միջոցով մենք ստանում ենք փրկության արարողությունները, որոնք մեզ թույլ են տալիս կրկին վերադառնալ և ապրել Աստծո հետ:

Օգնեք հասկանալ *(գլուխկոտրուկ հավաքել).* Հետևյալ բառերն ու արտահայտությունները գրեք առանձին թղթերի վրա. *մկրտություն, հաստատում, քահանայության կարգում (տղամարդկանց համար), տաճարային օժտում և տաճարային կնքում:* Յուրաքանչյուր թուղթը կտրեք գլուխկոտրուկի տեսքով: Երեխաներին հակիրճ բացատրություն տվեք, թե ինչ է նշանակում արարողություն (սուրբ ծիսակատարություն կամ գործողություն, որը հոգևոր նշանակություն ունի), և ասացեք երեխաներին, որ որոշ քահանայության արարողություններ հարկավոր են մեզ վերադառնալու և ապրելու համար Երկնային Հոր հետ: Գրատախտակին նկարեք հինգ աստիճաններ և Հիսուս Քրիստոսի նկարը դրեք վերևի աստիճանի վրա: Երեխաներին բաժանեք հինգ խմբի, և յուրաքանչյուր խմբի տվեք մեկական թուղթ: Խնդրեք նրանց հավաքել իրենց գլուխկոտրուկը և հետո կիսվել Երեխաների Խմբի մնացած անդամների հետ նրանով, ինչ գիտեն իրենք արարողության մասին: Թող խմբերը իրենց հավաքած գլուխկոտրուկները դնեն գրատախտակի համապատասխան աստիճանների վրա:

Բառաշերտեր կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում:

Շաբաթ 3. Քահանայության օրհնությունների միջոցով ես կարող եմ ստանալ զորացնող ուժ:

Ներկայացրեք վարդապետությունը *(քննարկել վարդապետությունը).* Խնդրեք երեխաներին բարձրացնել իրենց ձեռքերը և նայել դրանց: Հարցրեք, թե ինչպես են ձեռքերն օգնում իրենց խաղալ, աշխատել և պատրաստվել գալու Եկեղեցի: Հրավիրեք նրանց մնջախաղի միջոցով ներկայացնել յուրաքանչյուր պատասխանը: Այնուհետև հարցրեք նրանց, թե ինչպես կարող են նրանք օգտագործել իրենց ձեռքերը ուրիշներին օգնելու համար: Բացատրեք, որ քահանայություն կրողները կարող են օգտագործել իրենց ձեռքերը օրհնություններ տալու համար, որոնք օգնում և զորացնում են մեզ:

Օգնեք հասկանալ և կիրառել *(նկարներ դիտել և կիսվել փորձառություններով).* Սենյակի տարբեր մասերում ամրացրեք հաղորդության, մկրտության, երեխայի օրհնության և հիվանդներին ծառայություն մատուցելու նկարներ, և բացատրեք, թե ինչ է կատարվում յուրաքանչյուր նկարում: Հրավիրեք երեխաներին գծանշել իրենց երկու ձեռքերը թղթի վրա և կտրատել դրանք: Թող նրանք երկուսի վրա էլ գրեն իրենց անունները: Հրավիրեք նրանց իրենց թղթե ձեռքերից մեկը ամրացնել այն նկարի մոտ, որտեղ ցուցադրված է այն օրհնությունը կամ արարողությունը, որ նրանք ստացել են քահանայություն կրողի ձեռքերից: Ընտրեք մի քանի ձեռքեր և հրավիրեք այդ երեխաներին կիսվել իրենց զգացմունքներով այն մասին, թե ինչպես է քահանայությունը օրհնել և զորացրել իրենց: Պատմեք, թե 3 Նեփի 17.11–25–ում ինչպես Հիսուսը օրհնեց երեխաներին: Սենյակի դիմացի պատին ամրացրեք երեխաների հետ Հիսուսի նկարը և հրավիրեք յուրաքանչյուր երեխայի ամրացնել իրենց երկրորդ թղթե ձեռքը նկարի կողքին: Բացատրեք, որ քահանայություն կրողները Հիսուս Քրիստոսի անունով գործելու զորություն ունեն. նրանք կարող են օրհնել մեզ ճիշտ այնպես, ինչպես Հիսուսը կօրհներ, եթե այստեղ լիներ:

Դասի մեջ երեխաներին ակտիվորեն ընդգրկելը կօգնի նրանց ընկալել ուսուցանվող վարդապետությունը:

Շաբաթ 4. Ես կարող եմ տաճար գնալ և ստանալ արարողություններ իմ նախնիների համար, երբ ավելի մեծ լինեմ:

Ներկայացրեք վարդապետությունը և օգնեք հասկանալ *(զունավորում).* Հիշեցրեք երեխաներին, որ մենք պետք է ստանանք որոշակի քահանայության արարողություններ՝ նախքան Երկնային Հոր մոտ վերադառնալը: Խնդրեք նրանց թվարկել այդ արարողություններից մի քանիսը: Բացատրեք, որ շատ մարդիկ մահացել են առանց այդ արարողությունները ստանալու հնարավորության, և նրանք ունեն մեր օգնության կարիքը: Պատմեք երեխաներին ձեր նախնիներից մեկի մասին, ով մահացել է նախքան այս օրհնությունները ստանալը: Յուրաքանչյուր երեխայի տվեք թղթե մարդուկի մի օրինակ: Խնդրեք նրանց թղթի մի կողմում նկարել իրենց, իսկ թղթի մյուս կողմում՝ այն նախնիին, ում մասին դուք պատմեցիք: (Եթե երեխաները գիտեն իրենց նախնիներից մեկին, ով մահացել է առանց քահանայության արարողությունները ստանալու, նրանք կարող են նկարել այդ անձնավորությանը): Թող նրանք կրկնեն այս շաբաթվա թեման, իրենց առջև բարձրացրած պահելով թղթե կերպարները: Խնդրեք նրանց ցույց տալ իրենց նկարը, երբ ասեն «ես» բառը, և նախնիի նկարը, երբ ասեն «նախնիներ» բառը:

Ես կարող եմ այժմ որոշել դառնալ միսիոներ

«Եւ նորանց ասեց. Գնացէք բոլոր աշխարհք, աւետարանը քարոզեցէք ամեն արարածի» (Մարկոս ԺԶ.15):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Շաբաթ 1. Ես կարող եմ միսիոներ լինել, ծառայելով ուրիշներին:

Օգնեք հասկանալ *(դերակատարումներ).* Կարդացեք Մատթեոս ԻԵ.34–40 և բացատրեք, որ երբ մենք ծառայում ենք ուրիշներին, մենք ծառայում ենք նաև Երկնային Հորը (տես Մոսիա 2.17) ,և որ ծառայությունը մեզ երջանկություն կբերի և կօգնի, որ կարողանանք կրկին ապրել Աստծո հետ: Թող մի քանի երեխաներ բեմականացնեն որոշ ծառայություններ, ինչպես օրինակ ուտելիք տալը մեկին, ով սոված է, ընկերակցելը մեկին, ով մենակ է կամ այցելելը մեկին, ով հիվանդ է: Թող մնացած երեխաները գուշակեն, թե ինչ է կատարվում յուրաքանչյուր բեմականացման ընթացքում: Ցուցադրեք միսիոներների նկարներ: Հարցրեք, թե ինչպես են միսիոներները ծառայում Աստծուն: Բացատրեք, որ երբ մենք ծառայում ենք ուրիշներին, մենք նույնպես միսիոներներ ենք դառնում:

Խաղատախտակ և պտուտակ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում:

Օգնեք կիրառել *(խաղ խաղալ).* Պատրաստեք վեց տարբեր գույների արահետներով խաղատախտակ, որոնք առաջնորդում են դեպի Հիսուսի նկարը: Պատրաստեք վեց գունավոր մասերով պտուտակ, որոնք համապատասխանում են խաղատախտակի գույներին: Յուրաքանչյուր գույնի վրա գրեք մի անձնավորության անուն, ում երեխաները կարող են ծառայել, ինչպես օրինակ ծնող, ընկեր և հարևան: Ընտրեք մի երեխա, ով կպտտեցնի պտուտակը և կասի, թե ինչպես նա կարող է ծառայել այն անձնավորությանը, որին այն ուղղված է: Կրկնեք մյուս երեխաների հետ, մինչև խաղաքարը հասնի Փրկչի նկարին: Հիշեցրեք երեխաներին, որ երբ մենք ծառայում ենք ուրիշներին, մենք ծառայում ենք Աստծուն: Երգեք «Երբ մենք օգնում ենք» երգը (*CS,* 198):

Խաղեր. *Խաղերը դասերը բազմազան են դարձնում, երեխաներին հնարավորություն են տալիս հաղորդակցվել իրար հետ և ամրապնդում են ավետարանի ուսուցանված սկզբունքը զվարճալի եղանակով:*

Օգնեք երեխաներին մտածել իրենց հնարավորություններից: Իրենց տարիքին համապատասխան հարցերով կամ իրավիճակներով նրանց միտքը զբաղեցնելը օժանդակում է ուսուցմանը:

Շաբաթ 2. Ես կարող եմ միսիոներ լինել, լավ օրինակ ծառայելով:

Ներկայացրեք վարդապետությունը *(առարկայական դասի դիտում).* Նախքան Երեխաների Խմբի դասի սկսվելը, բեկորներով շենք կառուցեք և ծածկեք այն, որպեսզի երեխաները չտեսնեն: (Եթե բեկորներ չունեք, դուք կարող եք նկար նկարել գրատախտակին և նկարածը ծածկել թղթով): Նկարագրեք ծածկած կառույցը և թե ինչպես եք այն կառուցել: Այնուհետև, մի քանի երեխայի տվեք մի քանի բեկոր և խնդրեք փորձել կառուցել մի շենք, որը նման է ձեր կառուցածին: Երբ նրանք ավարտեն, բաց արեք ձեր շենքը և նշեք այդ երկուսի միջև եղած տարբերությունները: Խնդրեք երեխաներին վերակառուցել իրենց շենքը, նայելով ձեր օրինակին: Բացատրեք, որ շատ բաներ ավելի հեշտ են դառնում, երբ դուք հետևում եք որևէ մեկի օրինակին:

Օգնեք հասկանալ և կիրառել *(լսել պատմություններ և երգել երգեր).* Ցուցադրեք նկարներ և հակիրճ պատմեք մի քանի սուրբ գրքային պատմություններ, որոնցում երիտասարդ մարդիկ լավ օրինակ են եղել (օրինակ,

Դանիելն ու իր ընկերները հրաժարվում են խմել թագավորի գինին [տես Դանիել Ա.5–16], Մեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը [տես Դանիել Գ.4–29], Դանիելը առյուծի գուբում [տես Դանիել 6]: Ցույց տվեք միսիոներների մի նկար և հարցրեք երեխաներին, թե ինչպես են միսիոներները լավ օրինակներ հանդիսանում: Բացատրեք, որ երբ մենք լավ օրինակ ենք ծառայում, մենք միսիոներներ ենք լինում, քանի որ մեր օրինակը կարող է ուրիշների մոտ ցանկություն առաջացնել ավելին սովորելու Հիսուս Քրիստոսի մասին: Կիսվեք որոշ դեպքերով, երբ դուք տեսել եք, թե ինչպես են ձեր ծխի կամ ճյուղի երեխաները լավ օրինակներ ծառայել:

Երեխաներին խնդրեք երգել «Շողա» երգը (*CS,* 144): Երգելու ընթացքում, թող նրանք սենյակով մեկ փոխանցեն թղթից պատրաստված արևը: Ամեն անգամ երգը դադարելուց խնդրեք արևն իր ձեռքում բռնած երեխային ասել, թե ինչպես նա կարող է լավ օրինակ լինել (օրինակ՝ բարի լինելով, ճիշտն ասելով կամ ընկերներին Երեխաների Խումբ հրավիրելով):

Հրավիրեք յուրաքանչյուր երեխայի պատրաստել իր սեփական թղթե արևը, որի վրա գրված կլինեն «Ես կարող եմ շողացող օրինակ լինել» բառերը: Թող «Ես նման եմ աստղի» (*CS,* 163), «Հիսուսն ուզում է, որ ես արևաշող լինեմ» (*CS,* 60–61) կամ «Շողա» (*CS,* 144) երգերը երգելու ընթացքում երեխաները բարձր պահեն իրենց արևիկները:

Շաբաթ 3. Ես կարող եմ իմ ընկերներին սովորեցնել Հիսուս Քրիստոսի և Նրա Եկեղեցու մասին:

Ներկայացրեք վարդապետությունը *(դիտել ներկայացում).* Ձեռքսեղմումով ողջունեք մեկ կամ ավելի երեխաների և բեմականացրեք նրանց Երեխաների Խումբ ու Հիսուսի մասին սովորելու հրավիրելը: Խնդրեք հրավեր ստացողներին հրավիրել ուրիշներին, մինչև բոլոր երեխաները հրավիրվեն: Բացատրեք, որ Տերը ուզում է, որ մենք բոլորս լինենք միսիոներներ՝ սովորեցնելով մեր ընկերներին Հիսուս Քրիստոսի և Նրա Եկեղեցու մասին:

Օգնեք հասկանալ *(պատմություն լսել).* Կիսվեք պատմությամբ, որը նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն է պատմել Երեխաների Խմբի մի տղայի մասին, ով լավ միսիոներ էր: Գնացքում մի մարդ տղային հարցրեց Մորմոնների Եկեղեցու մասին: Տղան անգիր ասաց Հավատքի բոլոր Հանգանակները: Մարդն այնքան տպավորված էր նրանով, որ այս երիտասարդ տղան գիտեր, թե ինչին էր ինքը հավատում, որ գնաց Սոլթ Լեյք Սիթի, որպեսզի ավելին սովորեր Եկեղեցու մասին (տես Conference Report, Oct. 1975, 117–19; կամ *Ensign,* Nov. 1975, 77–79): Բացատրեք, որ Հավատքի Հանգանակները սովորելը կարող է մեզ օգնել հենց այժմ լինել միսիոներ:

Օգնեք հասկանալ *(կրկնել Հավատքի Հանգանակները).* Պատրաստեք 13 թղթեր, որոնցից յուրաքանչյուրի վրա կլինեն 1-ից մինչև 13 թվերը: Երեխաներին բաժանեք խմբերի: Թող յուրաքանչյուր խումբ ընտրի մի թուղթ և խմբի անդամները թող միասին աշխատեն սովորել հավատքի հանգանակը, որը համապատասխանում է այդ թվին: Երբ յուրաքանչյուր խումբ պատրաստ է, թող նրանք անգիր ասեն այն մյուս երեխաներին և այնուհետև մեկ այլ թերթիկ վերցնեն: Շարունակեք այնքան, որքան ժամանակը թույլ է տալիս:

Հուշում. *Խորհեք ամսվա համար սուրբ գրություն օգտագործելու մասին, որը կլրացնի ցանկացած միացյալ ժամի դասը: Դուք կարող եք նաև ամսվա թեման փակցնել Երեխաների Խմբի սենյակում:*

Ծրագրեք, թե ինչպես կարող եք գրավել երեխաների ուշադրությունը վարժության սկզբում: Օրինակ, այս վարժության մեջ երեխաների մոտ հետաքրքրություն կառաջանա, երբ նրանք սպասեն նրան, թե ինչ դուրս կգա պայուսակից:

Շաբաթ 4. Ես կարող եմ հենց այժմ պատրաստվել լիաժամկետ միսիա ծառայելուն:

Ներկայացրեք վարդապետությունը *(միսիոներական աշխատանքի հետ կապված առարկաների դիտում).* Պատրաստեք փոքրիկ պարկ կամ ճամպրուկ, որը պարունակում է առարկաներ, որոնք օգտագործում են լիաժամկետ միսիոներները, ինչպես օրինակ՝ կիրակնօրյա կոշիկներ, փողկապ և սուրբ գրություններ: Հրավիրեք մի քանի երեխայի առարկաները հանել պայուսակից և ցույց տալ մնացած երեխաներին: Հարցրեք երեխաներին, թե ինչու լոկ միայն այս առարկաներն ունենալը չի պատրաստում մեկին միսիոներ լինելուն: Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 84.62 և հրավիրեք երեխաներին լսել մեկ այլ բան, որը պետք է յուրաքանչյուր միսիոներին (վկայություն): Վկայեք անձնական վկայություն ձեռք բերելու կարևորության մասին:

Օգնեք հասկանալ *(նայել նկարներ և պատասխանել հարցերին).* Օգնեք երեխաներին հասկանալ վկայության հիմնական մասերը: Ցուցադրեք նկարներ, որոնք ներկայացնում են այդ մասերից մի քանիսը (օրինակ, որ Երկնային Հայրը սիրում է մեզ, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե է, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Տիրոջ ճշմարիտ Եկեղեցին է և որ մենք առաջնորդվում ենք ապրող մարգարեի կողմից): Մի քանի հարցեր տվեք յուրաքանչյուր նկարի վերաբերյալ, ինչպես օրինակ՝ Ի՞նչ է սա: Ո՞վ է նա: Ի՞նչ գիտեք դուք այդ մասին: Ինչպե՞ս դուք կարող եք ամրացնել ձեր վկայությունը սրա վերաբերյալ: Խնդրեք երեխաներին ասել այն մարդկանց անունները, ում հետ նրանք կարող են կիսվել իրենց վկայությամբ: Վկայեք, որ երբ երեխաները կիսվեն իրենց իմացածով ուրիշների հետ, նրանց վկայությունը կաճի և նրանք կնախապատրաստվեն միսիա գնալուն:

Դեկտեմբեր

Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է

«Ահա, ես Հիսուս Քրիստոսն եմ՝ Աստծո Որդին: Ես կյանքն եմ ու լույսն աշխարհի» (ՎԱՌ 11.28):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Պատմությունը պատմելիս երեխաների մասնակցությունը կօգնի նրանց կենտրոնացած պահել և ներգրավված լինել:

Շաբաթ 1. Երկնային Հայրն Իր Որդուն աշխարհ ուղարկեց:

Ներկայացրեք վարդապետությունը *(կրկնել վարժության հատվածը).* Երեխաների հետ միասին մի քանի անգամ կրկնեք հետևյալ տողերը.

Երկնային Հայրն Իր Որդուն աշխարհ ուղարկեց:
Նա եկավ որպես մանուկ: *(ձեռքերը պահեք այն դիրքով, կարծես, մանկիկ եք գրկել)*
Նա մեծացավ ձեր և իմ նման: *(գոտկատեղից կռացեք և դանդաղ կանգնեք)*
Որովհետև Նա սիրեց մեզ, *(ձեռքերը սրտին)*
Նա մահացավ մեզ համար: (նստեք)
Քանի որ Նա հարություն առավ, մենք կրկին կապրենք: *(կրկին կանգնեք)*

Բացատրեք, որ սուրբ գրություններում Հիսուսն ասում է մեզ, որ Նա Աստծո Որդին է: Միասին բարձրաձայն կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 11.28:

Օգնեք հասկանալ *(նկարել և լսել մի պատմություն).* Թող յուրաքանչյուր երեխա նկարի Հիսուս Քրիստոսի ծննդյան պատմությունից մի տեսարան կամ անձնավորության (օրինակ՝ Մարիամին, Հովսեփին կամ հովիվներին): Վերապատմեք Ղուկաս Բ.4–17 և Մատթեոս Բ.1–12: Հրավիրեք երեխաներին պատմության համապատասխան պահին բարձրացնել իրենց նկարները: Այս վարժության ընթացքում դուք կարող եք երգել Սուրբ Ծննդյան երգեր *Մանկական Երգարանից* (տես 34–54 էջերը): Ուսուցման ընթացքում երաժշտությունն օգտագործելու առաջարկությունների համար, տես *ՈՒՉԱՄԿ,* 172–75:

Շաբաթ 2. Հիսուսը զարգանում էր իմաստությունով և հասակով, և շնորհքով՝ Աստծո և մարդկանց մոտ:

Այս վարժության մեջ երեխաները կարող են զգալ, որ իրենք նման են Հիսուս Քրիստոսին, երբ հասկանան, որ Նա զարգանում էր այնպես, ինչպես իրենք:

Ներկայացրեք վարդապետությունը *(երգ երգել և անգիր սովորել սուրբ գրություն).* Ցուցադրեք նկարներ, որտեղ երևում է, ինչպես էր Հիսուսը զարգանում մանուկ հասակից մինչև չափահաս դառնալը: Միասին երգեք «Հիսուսը մանուկ էր» (*ՀՏ,* 55) երգը և խնդրեք երեխաներին բացատրել, թե ինչ է երգը սովորեցնում Հիսուսի մասին: Օգնեք երեխաներին անգիր սովորել Ղուկաս Բ.52, օգտագործելով հասարակ շարժումներ, որոնք կներկայացնեն Հիսուսի զարգացումը՝ իմաստությունով *(ցույց տվեք գլուխը),* հասակով *(ցուցադրեք ուժը),* շնորհքով Աստծո մոտ *(ծալեք ձեռքերը)* և մարդկանց մոտ *(ձեռքով թափահարեք մի ընկերոջ):*

Օգնեք կիրառել *(կարդալ սուրբ գրությունները և մասնակցել վարժություններին).* Մենյակը բաժանեք չորս մասի և յուրաքանչյուր մասում դրեք հետևյալ նշաններից մեկը. *Հիսուսը զարգանում էր իմաստությունով*—ՎԱՌ 88.118, *Հիսուսը զարգանում էր հասակով* —ՎԱՌ 89.20, *Հիսուսը զարգանում էր շնորհքով՝ Աստծո մոտ* —ՎԱՌ 88.63, *Հիսուսը զարգանում էր շնորհքով՝ մարդկանց մոտ* —Առակաց ԺԸ.24: Նախապատրաստեք պարզ վարժություն յուրաքանչյուր մասի համար, ինչպես օրինակ՝ Երկնային Հոր և Նրա պատվիրանների մասին երեխաների տարիքին համապատասխանող հարցեր («իմաստություն»), չափերիզ՝ երեխաների հասակը նշելու համար, թուղթ՝ առողջարար ուտելիք նկարելու համար («հասակ»), և պատմություններ *Ընկեր* կամ *Լիահոնա* ամսագրերից՝ վկայության և ընկերության վերաբերյալ («շնորհքով Աստծո մոտ» և «շնորհքով մարդկանց մոտ»): Բացատրեք, որ

մենք բոլորս էլ զարգանում ենք այնպես, ինչպես Հիսուսը՝ «իմաստութիւնով եւ հասակով, եւ շնորհքով՝ Աստուծոյ եւ մարդկանց մօտ» (Ղուկաս Բ.52)։ Երեխաներին բաժանեք չորս խմբի և խնդրեք մի չափահասի յուրաքանչյուր խմբի առաջնորդել նշաններից մեկի մոտ, որտեղ նրանք միասին կկարդան սուրբ գրությունը և կմասնակցեն վարժությանը։ Ցածրաձայն մի երաժշտություն նվագեք, երբ երեխաները տեղափոխվում են մեկ այլ նշանի մոտ։

Շաբաթ 3. Հիսուս Քրիստոսը աշխարհի լույսն ու կյանքն է։

Ներկայացրեք վարդապետությունը *(սուրբ գրքային վարժություն)*. Մենյակի հանդիպակաց կողմերում դրեք Քրիստոսի ծննդյան և մահվան նկարներ։ Ասեք երեխաներին, որ դուք կկարդաք որոշ սուրբ գրություններ, որոնք կամ Հիսուսի ծննդյան նշանների, կամ Նրա մահվան նշանների վերաբերյալ են։ Խնդրեք երեխաներին շրջվել դեպի այն նկարը, որին վերաբերվում է ձեր կարդացած սուրբ գրությունը։ (Եթե ձեր Երեխաների Խումբը փոքր է, երեխաները կարող են քայլել դեպի նկարները)։ Կարդացեք 3 Նեփի 1.15, 19, 21. 8.20, 22–23։ Քննարկեք, թե ինչպես Հիսուս Քրիստոսը լույս բերեց աշխարհին։ Խնդրեք երեխաներին կապել իրենց աչքերը և պատկերացնել, թե ինչ դժվարությունների կարող էին հանդիպել, եթե ստիպված լինեին ապրել առանց լույսի։ Այս դժվարությունները համեմատեք այն դժվարությունների հետ, որոնց մենք կհանդիպեինք, եթե չունենայինք Հիսուս Քրիստոսի ավետարանը։ Կարդացեք Հովհաննես Ը.12 և հրավիրեք երեխաներին լսել, թե ինչ պետք է մենք անենք, որպեսզի չքայլենք խավարի մեջ։

Օգնեք հասկանալ *(խաղալ գուշակող խաղ)*. Բացատրեք, որ շատ խորհրդանշաններ օգնում են մեզ հիշել, որ Հիսուսը աշխարհի լույսն է. որոշ խորհրդանշաններ օգտագործվում են Սուրբ Ծննդյան ժամանակ։ Այս խորհրդանշաններից մի քանիսը դրեք պարկի մեջ (ինչպես օրինակ՝ մոմեր, թղթե աստղիկներ կամ լույսեր)։ Խնդրեք մի երեխայի ձեռքը մտցնել պարկի մեջ, առանց նայելու շոշափել առարկաներից մեկը՝, գուշակել, թե ինչ է դա և հետո ցույց տալ այն մնացած երեխաներին։ Խնդրեք երեխային կիսվել որևէ բանով, որ Հիսուս Քրիստոսն արեց՝ մեր կյանքում լույս բերելու համար։ Կրկնեք մյուս նկարներով։

Օգնեք կիրառել *(նկար նկարել)*. Յուրաքանչյուր երեխայի տվեք թղթե արև։ Թող նրանք գրեն կամ նկարեն, թե ինչպես կարող են հետևել Հիսուս Քրիստոսի լույսին։ Խրախուսեք նրանց կիսվել իրենց թերթիկներով իրենց ընտանիքների հետ։

Կրկնեք. *Դեկտեմբերը լավ ամիս է կրկնության համար։ Խորհեք նախորդ դասերից որևէ վարժություն կրկնելու մասին, հրավիրելով երեխաներին պատմել, թե ինչպես են շաբաթվա ընթացքում ապրել այդ վարդապետության համաձայն, կամ հարցնելով նրանց, թե ինչպես են նրանք կիսվել վարդապետությամբ իրենց ընտանիքի հետ։*



Արևի նկար կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում։

Շաբաթ 4. Ջոզեֆ Սմիթը տեսավ և վկայեց Հիսուս Քրիստոսի մասին։

Օգնեք հասկանալ *(բացել նվերներ)*. Նվերի տեսքով փաթեթավորեք Առաջին Տեսիլքի նկարը։ Բացատրեք, որ շատ մարդիկ ծնունդը տոնելիս նվերներ են տալիս։ Հարցրեք, թե ում ծնունդն ենք մենք տոնում Սուրբ Ծննդյան օրերին։ Բացատրեք, որ մեկ այլ կարևոր անձնավորություն էլ է ծնվել դեկտեմբերին։ Հրավիրեք մի երեխայի բացել նվերը պարզելու համար, թե ով է այդ անձնավորությունը։ Ասացեք երեխաներին, որ դեկտեմբերի 23-ին Ջոզեֆ Սմիթի ծնունդն է։ Քննարկեք Առաջին Տեսիլքը և բացատրեք, որ մեզ կարևոր պարգևներ են տրվել ի շնորհիվ այն բանի, որ Ջոզեֆ Սմիթը տեսավ և վկայեց Հիսուս Քրիստոսի մասին։ Գրատախտակին գրեք «Պարգևներ, որոնք տրվել են մեզ ի շնորհիվ այն բանի, որ Ջոզեֆ Սմիթը տեսավ և վկայեց Հիսուս Քրիստոսի մասին»։ Պատրաստեք չորս մեծ թղթի կտորներ, որոնցից յուրաքանչյուրի վրա գրված կլինեն հետևյալ պարգևներից մեկը. «Մենք ունենք Մորմոնի Գիրքը», «Մենք այսօր երկրի վրա ունենք ճշմարիտ Եկեղեցի», «Մենք ունենք քահանայություն», «Մենք գիտենք, որ Երկնային Հայրը լսում և պատասխանում է աղոթքներին»։

Երեխաներին բաժանեք չորս խմբերի։ Յուրաքանչյուր խմբի տվեք թերթիկներից մեկը և խնդրեք նկարել այդ պարգևը։ Խնդրեք նրանց որպես պարգև տալ իրենց նկարը մեկ այլ խմբի։ Հրավիրեք յուրաքանչյուր խմբի ցույց տալ և բացատրել իրենց պարգևը մնացած երեխաներին և դնել նկարը գրատախտակի վրա։

Օգնեք կիրառել *(վկայել Հիսուս Քրիստոսի մասին)*. Թող երեխաները փակեն իրենց աչքերը և մտածեն որևէ մեկի մասին, ում հետ կարող են կիսվել ավետարանի պարգևով։



Ասացեք նրանց, որ իրենք կարող են նմանվել Ջոզեֆ Սմիթին և վկայել Հիսուս Քրիստոսի մասին։

Բառաշերտեր կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում։

Ինչպե՞ս օգտագործել երաժշտությունը Երեխաների Խմբում

Երեխաների Խմբում երաժշտության նպատակը երեխաներին սովորեցնելն է Հիսուս Քրիստոսի ավետարանը և օգնելը նրանց ապրել դրանով: Երեխաների Խմբի երգերը սովորելու գործընթացը ավելի հաճելի են դարձնում, երեխաներին օգնում են սովորել և հիշել ավետարանի ճշմարտությունները և հրավիրել Հոգին Երեխաների Խումբ:

Հետևյալ եղանակները կօգնեն ձեզ ուսուցանել ավետարանը երաժշտության միջոցավ: Օրինակները կօգնեն ձեզ այս ծրագրում առաջարկված երգերն ուսուցանելիս: Լրացուցիչ մտքերի համար տես «Ինչպես օգտագործել երաժշտությունը Երեխաների Խմբում» բաժինը 2010 և 2011 ծրագրերում:

Ամրապնդեք ավետարանի սկզբունքները. *Միացյալ ժամին երաժշտություն ներկայացնելը օգնում է ամրապնդել Երեխաների Խմբի նախագահության կողմից ուսուցանված սկզբունքները: «Երաժշտությունը հիանալի միջոց է Տիրոջ Հոգին ձեր դասերին հրավիրելու համար: Երաժշտությունը օգնում է մեզ արտահայտել մեր զգացմունքները, որոնք, միգուցե, դժվար լինի արտահայտել բառերի միջոցով» (*Ուսուցման Ուղեցույց *[2001], 10):*

Հարցեր տվեք. *Երեխաներին ներգրավելու համար հարցեր օգտագործեք: Հարցերը օգնում են կենտրոնացնել երեխաների ուշադրությունը և ավելի լավ ըմբռնել ավետարանի սկզբունքները (տես CS, 300): Հիշեք, որ հարցը պետք է ներկայացնել այնպես, որ երեխաները կարողանան բացահայտել պատասխանը, մինչ երգում են երգը:*

Ուսուցանել ավետարանը երաժշտության միջոցավ

Երեխաների Խմբում ուսուցանված ամենահրաշալի դասերը ուսուցանվել են երաժշտության միջոցով: «Երաժշտությունը կարող է մեծացնել երեխաների կողմից ավետարանի սկզբունքների ընկալումը և ամրացնել նրանց վկայությունները» (*ՈՒՀԱՄԿ,* 174): Կարող եք երգի մասին հարցեր տալ, որպեսզի օգնեք երեխաներին հասկանալ դրա իմաստը: Օրինակ, «Ընտրիր ճիշտը» (*Hymns,* no. 239) ուսուցանում է, որ մենք կյանքում որոշումներ կայացնելիս մենակ չենք. Սուրբ Հոգին կօգնի մեզ արդար ընտրություններ կատարել: Երեք Ը6 վահաններ գծապատկերեք գրատախտակին և հետևյալ հարցերը գրեք դրանց մեջ. «Ո՞վ կօգնի ինձ ընտրել ճիշտը», «Ե՞րբ օգնությունը կշողա ինձ վրա» և «Ի՞նչ է խոստացվում, եթե ես ընտրեմ ճիշտը»: Ցույց տվեք առաջին վահանը, միասին կարդացեք հարցը և խնդրեք երեխաներին լսել, մինչ դուք երգում եք, այնուհետև կանգնել, երբ նրանք լսում են պատասխանը: Թող նրանք ձեզ հետ միասին մի քանի անգամ երգեն պատասխանը: Սա կօգնի նրանց բառերը համապատասխանեցնել երաժշտությանը: Կրկնեք, օգտագործելով մյուս հարցերը: Քննարկեք արտահայտությունները կամ բառերը, որոնք կարող են երեխաների համար դժվար հասկանալի լինել: Երգեք ամբողջ երգը և հիշեցրեք երեխաներին, որ երբ նրանք երգում են այն, նրանք վկայում են, որ Սուրբ Հոգին կօգնի մեզ, եթե մենք լսենք և ճիշտ ընտրություններ կատարենք:

Բոլոր երեխաներին ներգրավեք երաժշտական վարժություններում

Բոլոր տարիքի և կարողությունների տեր երեխաներին գրավում է երաժշտությունը, և նրանք սիրով են մասնակցում երաժշտական վարժություններին: Երգերի ռիթմը օգնում է երեխաներին հիշել այն, ինչ նրանք երգում են, ինչպես նաև երգի ուղերձը: Երբ երգեք «Պաշտպանել ճշմարտությունը» երգը (*CS,* 159), մտածեք երգի տեմպը և ձայնի բարձրությունը փոփոխելու մասին: Մտածեք երաժշտական տերմիններ սովորեցնելու մասին, ինչպիսիք են *լեգատո* (դանդաղ և սահուն) և *ստակկատո* (արագ և կտրուկ), և թող երեխաները երգը երգեն երկու ձևով:

Երեխաները նաև սիրում են մասնակցել շարժումներ կատարելով, ինչպես օրինակ՝ ծափ տալով երաժշտության ռիթմը կամ համապատասխանեցնելով ձեռքի շարժումները բառերին: «Իմաստուն մարդը և անխելք մարդը» երգի

մեջ (*CS*, 281) ձեռքի շարժումները կօգնեն երեխաներին կենտրոնանալ երգի բառերի վրա: Դուք կարող եք շարժումներ օգտագործել նաև, երբ երգեք «Նեփիի քաջությունը» (*CS*, 120–21): Օրինակ, խնդրեք երեխաներին ձևացնել, թե մի ձեռքով վահան են բռնել, երբ երգում են «Կգնամ», սուր գլխավերևում, երբ երգում են «Կանեմ այն, ինչ Տերն է պատվիրում», և տեղում քայլել, երբ երգում են «Գիտեմ, Տերն ուղի է տալիս. ուզում է հնազանդվեմ»: Խնդրեք երեխաներին պատշաճ շարժումներ մտածել ցանկացած երգի համար (որոշ շարժումներ կարող է հարմար չլինեն հաղորդության ժողովի ելույթի համար):

Հուշում. *Խրախուսեք երեխաներին երգել Երեխաների Խմբի երգերը ընտանեկան երեկոյի, սուրբ գրությունների ուսումնասիրության և հարմար այլ ժամանակ:*

Կրկնեք երգերը ավետարանի սկզբունքները ամրապնդելու համար

Երբ երգ եք ուսուցանում, պետք է հաճախ կրկնեք այն, որպեսզի երեխաները սովորեն: Դուք պետք է նաև տարվա ընթացքում կրկնեք երգերը, որպեսզի երեխաները դրանք չմոռանան: Երգն ուսուցանելուց հետո, կրկնեք այն և երգեք զանազան զվարճալի ձևերով: Շարունակեք երգերը երգել նույնիսկ հաղորդության ժողովի ելույթից հետո, որպեսզի երեխաները հիշեն դրանք: Կարող եք տարբեր առարկաների վրա գրել այն երգերը, որոնք ուզում եք, որ երեխաները կրկնեն (օրինակ, ծաղկամանի ծաղիկների, թղթե լճակի ձկնիկի, հնդկահավի փետուրների, ծառի տերևների կամ սենյակով մեկ փակցրած սրտիկների վրա): Խնդրեք երեխաներին հերթով ընտրել մեկական առարկա և հետո երգել երգը: Հետևյալ լրացուցիչ մտքերը նախատեսված են երգերը կրկնելու համար (ցուցադրական նյութերը կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում).

- *Երգող խորանարդիկ.* Պատրաստեք խորանարդիկ, որի յուրաքանչյուր կողմում գրված են տարբեր գործողություններ: Խնդրեք երեխաներին պտտել խորանարդիկը, որը կորոշի այն շարժումը, որը նրանք պետք է կատարեն երգելու ընթացքում:

- *Երգում են աղջիկները/երգում են տղաները.* Պատրաստեք մի տղայի նկար և մի աղջկա նկար, և սոսնձեք դրանք կամ կպցրեք առանձին փայտիկների վրա: Մինչ կրկնում եք երգը, փոխեք նկարները և ցույց տվեք, թե ով պետք է երգի: Սա երեխաներին ակտիվորեն ներգրավված կպահի:

- *Երգող տիկնիկներ.* Յուրաքանչյուր երեխայի համար պատճենահանեք և կտրեք-հանեք *Նայեք ձեր փոքրիկներին* մանկամսուրային դասագրքի 63-րդ էջի նկարներից մեկը, որպեսզի նրանք այն գունավորեն: Սոսնձեք կամ կպցրեք յուրաքանչյուր նկարը թղթե պարկին, որպեսզի տիկնիկներ պատրաստեք: Հրավիրեք երեխաներին երգել իրենց տիկնիկներով:

- *Նետում զամբյուղի մեջ.* Հրավիրեք երեխաներից մեկին լոբու պարկը կամ ճմրթած թղթի կտորը նետել զամբյուղի մեջ: Եթե առաջին իսկ փորձից դա նրան հաջողվում է, ապա թող երեխաները հատվածը երգեն մեկ անգամ: Եթե դա հաջողվում է երկրորդ փորձից, թող նրանք երկու անգամ երգեն հատվածը, և այսպես շարունակ:

Որպես Աստծո Զավակ

Ուրախ ♩ = 96–108

Խոսք և երաժշտություն՝ Ջենիս Քափ Փերի

1. Ես ու - նեմ ըն - տրե - լու զո - ղու - թյուն, Ինձ
2. Եր - ջա - նիկ եմ ես և ա - պա - հով, Ըն -
3. Տա - նը ես սի - ղով կը - ծա - ռա - յեմ: Լավ

և ըն - տա - նի - քիս հա - մար օրհ - նու - թյուն:
տա - նի - քը ս լց - ված է խա - ղաղ սի - ղով: Որ - պես
զոր - ծե - ղով ըն - տա - նի - քը ս կամ - ղաց - նեմ:

Աստ - ծո զա - վակ՝ հա - տուկ լույս ու - նեմ. Սուրբ

Հո - գին օգ - նում է, որ միշտ ճիշտ վար - վեմ:

Copyright © 2006 by Janice Kapp Perry. Բոլոր իրավունքները վերապահված են: Այս երգը կարող է բազմացվել միայն առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար: Այս ծանուցումը պետք է ներառվի յուրաքանչյուր օրինակի մեջ:

Հաշմանդամ երեխաների ուսուցանում

Փրկիչը սովորեցրել է. «Բոլոր քո զավակները պիտի ուսուցանվեն Տիրոջ կողմից. և մեծ պիտի լինի քո զավակների խաղաղությունը» (3 Նեփի 22.13):

Երեխաների Խմբի ղեկավարները կարևոր պարտականություն ունեն՝ սովորեցնելու Հիսուս Քրիստոսի ավետարանը բոլոր երեխաներին, ներառյալ նրանց, ովքեր հաշմանդամ են: Երեխաների Խումբը մի վայր է, որտեղ յուրաքանչյուր երեխա պետք է ողջունվի, սիրվի, կրթվի ու ներգրավվի: Նման մթնոլորտում բոլոր երեխաներին ավելի հեշտ է հասկանալ մեր Երկնային Հոր ու Հիսուս Քրիստոսի սերը, և զգալ ու ճանաչել Սուրբ Հոգու ազդեցությունը:

Յուրաքանչյուր երեխա թանկ է Աստծո համար: Յուրաքանչյուրն ունի սիրո, հարգանքի ու աջակցության կարիք:

Խորհրդակցեք ուրիշների հետ, երբ աշխատում եք հոգալ ձեր Երեխաների Խմբի հաշմանդամ երեխաների կարիքները:

1. **Խորհրդակցեք երեխայի ծնողների հետ:** Ծնողները սովորաբար ավելի լավ գիտեն իրենց երեխային, քան ուրիշները: Նրանք կարող են ձեզ սովորեցնել, թե ինչպես ընդառաջ գնալ նրա կարիքներին, գրավել ուշադրությունը, և կծանոթացնեն սովորելու սիրած ձևերին: Օրինակ, որոշ երեխաներ հատկապես լավ են արձագանքում երաժշտությանը, մյուսները՝ պատմություններին, նկարներին, սուրբ գրություններին կամ շարժումներին: Օգտագործեք ուսուցման բազմազան մեթոդներ, համոզվելով, որ օգտագործում եք այնպիսի եղանակներ, որը լավագույնն է յուրաքանչյուր երեխայի սովորելու համար:

2. **Խորհրդակցեք Երեխաների Խմբի մյուս ղեկավարների ու ուսուցիչների հետ:** Աղոթեք և միասին աշխատեք, որ գտնեք ճանապարհներ՝ օգնելու յուրաքանչյուր երեխայի սովորել Հիսուս Քրիստոսի ավետարանը և սիրված զգալ:

3. **Խորհրդակցեք ճյուղի խորհրդատուի հետ:** Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները կարող է մտքեր ունենալ հատուկ կարիքներ ունեցող երեխաներին օգնելու համար: Մի ծխում, քահանայապետերի խումբը առաջարկել էր ամեն շաբաթ «Երեխաների խմբին պապիկ» տալ, որը կնստի երիտասարդ տղայի հետ, որը առուհզմ ունի: (Լավ կլինի, որ ամեն շաբաթ լինի նույն մարդը): Սա օգնեց տղային կենտրոնանալ դասի վրա և իրեն սիրված զգալ:

Երեց Մ. Ռասսել Բալլարդը սովորեցրել է. «Ակնհայտ է, որ մեզնից նրանց, ում վստահված են թանկարժեք երեխաներ, տրվել է սուրբ, վեհանձն պատասխանատվություն, որովհետև մեզ է, որ Աստված ընտրել է, որ այսօրվա երեխաներին շրջապատենք սիրով և հավատի կրակով, և հասկացողությամբ, թե իրենք ովքեր են» (“Great Shall Be the Peace of Thy Children,” *Ensign,* Apr. 1994, 60):



Կերպարանքներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում:

Լրացուցիչ տեղեկության համար, *թե ինչպես կարելի է օգնել հատուկ կարիքներ ունեցող երեխաներին, տես* Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում, *38–39, և disabilities.lds.org կայքը:*

Որոշ հաշմանդամ երեխաներ լավ են արձագանքում ցուցադրական հուշումներին: Օգտագործեք այնպիսի ազդանշաններ, ինչպիսին են այստեղ ցուցադրվածները, որոնք ցույց են տալիս, թե երբ է աղոթելու ժամը, լռելու կամ երգելու ժամը:

Հարմարեցվող դասեր. *Դուք միգուցե կարիք ունենաք հարմարեցնել ձեր միացյալ ժամը հաշմանդամ երեխաների համար: Տես sharingtime.lds.org կայքը որոշ օրինակների համար:*

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Հրատարակվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վարապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 4/16:
Թարգմանության հաստատումը. 4/16: *Outline for Sharing Time: Choose the Right*. -ի թարգմանությունը: Armenian. 13484 201

ARMENIAN
4 02134 84201 1
13484 201